

**«ՈՒԼՏՐԱԲԱԿ» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանի հավելվածի 20-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ «Ուլտրաբակ» ախտահանիչ միջոցի կիրառման հրահանգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

ՀՐԱՀԱՆԳ

«ՈՒԼՏՐԱԲԱԿ» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ուլտրաբակ» ախտահանիչ միջոցը (այսուհետ՝ միջոց) իրենից ներկայացնում է երկնագույնից մինչև մանուշակագույն երանգի թափանցիկ հեղուկի տեսքով խտանյութ: Որպես ազդող նյութ, միջոցը պարունակում է ալկիլդիմեթիլամոնիումի քլորիդ, Ն,Ն-բիս (3-ամինապրոպիլ) դոդեցիլամին, պոլիհեքսամեթիլենբիգուանիդ հիդրոքլորիդ, ինչպես նաև՝ ֆունկցիոնալ և տեխնոլոգիական բաղադրիչներ, այդ թվում՝ ոչ իոնագեն մակերեսային ակտիվ նյութեր, կոռոզիայի ընկճիչ, ջրի կոնդիցիոներ, հոտավետիչ, գունավորիչ և թորած ջուր: Միջոցի խտանյութի Ph-ը՝ $10,5 \pm 1,5$ միավոր:

2. Ախտահանիչ միջոցի պիտանելիության ժամկետը արտադրողի փակ տարայում պահպանման պայմանում 5 տարի է, աշխատանքային լուծույթինը՝ 41 օր: Աշխատանքային լուծույթի բազմակի օգտագործման ժամկետը՝ 41 օր:

3. Ախտահանիչ միջոցը թողարկվում է 0,1, 0,2, 0,25, 0,5, 1,0 դմ³ տարողությամբ ամուր փակվող կափարիչներով պոլիմերային սրվակների, 5, 10 կամ 20 դմ³ տարողությամբ պոլիմերային կանիստրների, 50, 100, 150, 200 դմ³ պոլիմերային տակառների մեջ:

4. Ախտահանիչ միջոցը օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների նկատմամբ (այդ թվում՝ տուբերկուլոզի հարուցիչների՝ թեստավորված Միկոբակտերիում տեռոնայի վրա), ներհիվանդանոցային և անաէրոբ վարակների, Կանդիդա և Տրիխոֆիտոն տեսակի սնկերի, բորբոսասնկերի (թեստավորված Ասպերգիլուս նիգերի վրա), վիրուսների (Կոքսակի, ECHO, պոլիոմիելիտի, ընդերային, արտաընդերային հեպատիտներ Ա, Բ, Ց և այլ, ՄԻԱՎ, ատիպիկ թոքաբորբ (ՍԱՐՍ), գրիպի, այդ թվում՝ H5N1, H1N1, հերպեսի,

ադենովիրուսների և այլն), հատուկ վտանգավոր վարակների հարուցիչների (ժանտախտ, խոլերա, տուլարեմիա), միջոցն օժտված է հատկություններով մակաբուծային հիվանդությունների հարուցիչների (նախակենդանիների ցիստեր և օոցիստեր, որդերի ձվեր և թրթուրներ) նկատմամբ: Ախտահանիչ միջոցը թոտացիա չի պահանջում:

5. Միջոցը լավ խառնվում է ջրի հետ: Սառչում է: Ապաստոեցումից հետո ամբողջությամբ վերականգնում է իր հատկությունները: Խիտ և աշխատանքային լուծույթները դյուրավառ չեն, հրդեհա- և պայթյունանվտանգ են:

6. Ախտահանիչ միջոցն օժտված է լվացող և դեզոդորային հատկություններով, չի առաջացնում մետաղների ժանգոտում, չի փչացնում մշակվող մակերեսները, չի գունաթափում հյուսվածքները, չի ֆիքսում օրգանական աղտոտվածությունը:

7. Միջոցը ոչնչացնում է ճարպի, յուղի, մրի, սպիտակուցային նստվածքների և շատ այլ դժվար հեռացվող նյութերի բծերը և նստվածքները ցանկացած տեսակի մակերեսներից (ապակի, հայելի, մետաղ, կերամիկա, գորգ, կաշի, քրոմապատ արտադրատեսակներ, բետոն, սալիկ, ռետին, պլաստիկ, վինիլ, ճենապակի, հախճապակի և այլ, այդ թվում՝ ծակոտկեն): Միջոցն անհամատեղելի է օճառների և անիոնային մակերեսային ակտիվ նյութերի հետ:

8. Ախտահանիչ միջոցն՝ ըստ սուր թունաբանական ցուցանիշների, ստամոքս ներմուծելու ժամանակ պատկանում է չափավոր վտանգավոր նյութերի 4-րդ դասին: Որովայնամզի վրա ազդելիս պատկանում է քիչ թունավոր նյութերին (4-րդ դաս): Ներշնչական (ինհալյացիոն) ազդեցության ժամանակ, գոլորշիների տեսքով, ըստ ցնդելիության աստիճանի (C_{20})՝ միջոցը քիչ վտանգավոր է, աէրոզոլի տեսքով միջոցն օժտված է ընդհանուր թունավոր ազդեցությամբ՝ միանգամյա օգտագործման շեմին համապատասխան: Միջոցը մաշկի և աչքերի լորձաթաղանթների հետ միանվագ շփվելիս թողնում է ընդհանուր գրգռիչ ազդեցություն: Գերզգայունություն առաջացնելու հատկությունը թույլ է արտահայտված:

9. Միջոցի աշխատանքային լուծույթները միանվագ ազդեցության ժամանակ չեն առաջացնում մաշկի և աչքերի լորձաթաղանթի գրգռիչ ազդեցություն:

10. Սահմանային թույլատրելի խտությունը (ՍԹԽ) աշխատանքային տարածքի օդում՝ ալկիլդիմեթիլամոնիումի քլորիդի՝ 1 մգ/մ³ (աէրոզոլ), Ն,Ն-բիս(3-ամինոպրոպիլ)դոդեցիլամին՝ 1 մգ/մ³ (աէրոզոլ), Պոլիհեքսամեթիլենբիգուանիդ հիդրոքլորիդ՝ 2 մգ/մ³ (աէրոզոլ):

11. Ախտահանիչ միջոցը նախատեսված է կանխարգելիչ, ընթացիկ, եզրափակիչ ախտահանման, հիմնական մաքրում իրականացնելու համար, դեզինվազիայի և դեհելմինթիզացիայի համար՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում, դեղագործական և դեղատնային կազմակերպություններում և պետական, քաղաքային և մասնավոր առողջապահական կազմակերպություններում (առողջապահության բոլոր մակարդակների և գերատեսչական պատկանելության կազմակերպություններ՝ ներառյալ ամբուլատոր-պոլիկլինիկական, ատամնաբուժական և ստացիոնար բժշկական կազմակերպություններ, ֆելդշերա-մանկաբարձական կետ, օրգանների փոխպատվաստման կենտրոններ, բժշկական մասնագիտական կենտրոններ, արյան փոխներարկման ծառայություններ, ծննդատներ, ծննդաբերական բաժանմունքներ, նորածնային բաժանմունքներ, մանկական բաժանմունքներ, նեոնատալ կենտրոններ և բաժանմունքներ, ախտահանիչ կայաններ, վարակիչ հիվանդությունների օջախներ, սանիտարական տրանսպորտի բոլոր տեսակներ, առողջապահական կազմակերպություններին կից հասարակական սննդի օբյեկտներ), գիտական, փորձագիտական լաբորատորիաներում (մանրէաբանական, վիրուսաբանական, սնկաբանական և այլն), այդ թվում՝ տեխնիկական և բնական բնույթի արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման պայմաններում, բոլոր տեսակի սոցիալական կազմակերպություններում (տարեցների, հաշմանդամների տներ, մանկատներ, անտունների գիշերային կացության տներ, ինտերնատներ, հոսպիսներ և այլն), սանթոդարաններում, հավաստագրի հիման վրա մասնավոր բժշկական գործունեություն իրականացնող իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև՝ այլ օբյեկտներում (սոցիալական ծառայություն մատուցող, մշակույթային, սպասարկման ոլորտի, սպորտային-առողջարանային նշանակության, այդ թվում՝ հյուրանոց, հանրակացարան, առողջարան, պանսիոնատ, հանգստյան տուն, բաղնիք, շոգեբաղնիք, լվացքատուն, վարսավիրանոց, գեղեցկության սրահ, լողավազան,

ակվապարկ, սպորտային համալիր, ֆիթնես ակումբ, սոլյարի, հասարակական զուգարան և ազգաբնակչության սպասարկման ոլորտի այլ կազմակերպություններ, ադմինիստրատիվ, ֆինանսական կազմակերպություններ, կրթական հիմնարկներ, թատրոն, կինոթատրոն, ակումբ, ցուցահանդես, դիսկոտեկ, օժանելիքակոսմետիկական ձեռնարկություններ, սննդի արտադրություններ՝ ներառյալ ալկոհոլային և ոչ ալկոհոլային ըմպելիքները և գարեջրագործությունը և այլն:

12. Ախտահանիչ միջոցը նախատեսված է՝

1) մակերեսների ախտահանման և լվացման համար, այդ թվում համակցված մեկ գործողության մեջ, սենքերում, կոշտ և փափուկ կահույքի, կահավորանքի առարկաների, հարթ և գորգե հատակի ծածկույթների, սարքերի և սարքավորումների արտաքին մակերեսների և այլն,

2) սպասքի, սպասք լվանալու պարագաների ախտահանման և լվացման համար (այդ թվում լաբորատոր և դեղատնային), ավտոմատ լվացող և ախտահանող մեքենաներում սպասքի մշակման համար,

3) կուվեզների, դրանց մասերի և հարմարանքների ախտահանման համար,

4) անեսթեզիոլոգիական սարքավորումների, նարկոզա-շնչառական ապարատների և դրանց մասերի և հարմարանքների (ներառյալ խողովակները) ախտահանման համար,

5) համազգեստի, սպիտակեղենի, խնամքի և հիգիենայի պարագաների, հեղուկանթափանց ներքնակների (այդ թվում պոլիուրետանային ծածկույթով), անկողնային մոմլաթների, խաղալիքների, սպորտային գույքի, կոշկեղենի, ռետինե և պոլիպրոպիլենային գորգերի, մաքրման նյութերի և գույքի, սանիտարա-տեխնիկական սարքավորումների ախտահանման համար,

6) դեզպատնեշների, դեզգորգերի ողողման համար,

7) մակերեսների, լաբորատոր սպասքի, գործիքների, նյութերի, աքսեսուարների, ինչպես նաև թափոնների ախտահանման համար,

8) խոհանոցային արտադրություններում, ճաշարաններում, հասարակական սննդի և սննդարդյունաբերության այլ օբյեկտներում օգտագործվող սարքավորումների և

հարմարանքների, այդ թվում սննդամթերքի հետ շփում ունեցող, մակերեսների ախտահանման համար,

9) բժշկական թափոնների (վիրակապական նյութ, միանվագ օգտագործման սպիտակեղեն և այլ արտադրատեսակներ) ախտահանման համար,

10) կենսաբանական հեղուկների, արյան, արյան մակարդուկների, խորխի, մեզի, կղանքի, փսխման զանգվածի և այլ ախտածին և/կամ վարակված կենսաբանական նյութերի, լվացման ջրերի, այդ թվում էնդոսկոպների, ախտորոշման նյութերի, սննդային միջավայրների, պատվաստանյութերի, ներառյալ ԲՅԺ, իմունակենսաբանական պատրաստուկների, շիճուկի, անատոքսիների և այլնի ախտահանման համար,

11) սենքերում մակերեսների և օբյեկտների, սպասքի, արյունով, արտադրություններով, կենսաբանական հեղուկներով և այլ օրգանական նյութերով աղտոտված, այդ թվում վարակված հիվանդի խնամքի պարագաների ախտահանման և լվացման համար,

12) աղբահեռացման համակարգի, աղբահավաքման սարքավորումների, տրանսպորտի և աղբարկղների ախտահանման, լվացման և դեզոդորացման համար, այդ թվում մեկ գործընթացի մեջ համակցված,

13) կոնտեյներների, բժշկական թափոնների հավաքման հարմարանքների և սարքավորումների ախտահանման, լվացման և դեզոդորացման համար, այդ թվում մեկ գործընթացի մեջ համակցված,

14) շրջակա միջավայրի օբյեկտների, հողի, մակերեսների և այլ օբյեկտների, այդ թվում սենքերի ներսում գտնվող մակաբուծային հիվանդությունների հարուցիչներով (նախակենդանիների ցիստեր և օօցիստեր, ճիճուների ձվեր և թրթուրներ) բաղարկված օբյեկտների, մակերեսների, սարքավորումների և ապարատների ախտահանման և դեզինվազիայի համար,

15) բիոզուգարանների, ավտոնոմ (ինքնավար) զուգարանների և այլնի մակերեսների ախտահանման և լվացման համար, զուգարաններում, հորերում, բիոզուգարաններում և այլն, այդ թվում մակաբուծային հիվանդությունների հարուցիչներով (նախակենդանիների ցիստեր և օօցիստեր, ճիճուների ձվեր և թրթուրներ) բաղարկված կղանքա-միզային խառնուրդի ախտահանման և դեզինվազիայի համար,

- 16) կոշկեղենի ախտահանման համար,
- 17) սենքերում օդի ախտահանման համար,
- 18) օդափոխության և օդակարգավորման համակարգերի (այդ թվում՝ կենցաղային օդորակիչներ, սալիտ համակարգեր, մուլտիզոնային սալիտ-համակարգեր, տանիքային օդորակիչներ, օդափոխման ֆիլտրեր և այլն) ախտահանման համար,
- 19) բորբոսասնկերով ախտահարված օբյեկտների մշակման համար և բորբոսասնկերով սենքերի ախտահարման կանխարգելման նպատակով,
- 20) բոլոր բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում տարբեր նյութերից պատրաստված բժշկական նշանակության արտադրատեսակների, կոշտ և ճկուն էնդոսկոպների և դրանց կցվող գործիքների ախտահանման, այդ թվում համակցված նախամանրէազերծման մշակման հետ, էնդոսկոպների և դրանց կցվող գործիքների նախնական մաքրման համար, բժշկական նշանակության արտադրատեսակների (ներառյալ վիրաբուժական և ատամնաբուժական, այդ թվում՝ պտտվող գործիքներ, կոշտ և ճկուն էնդոսկոպներ և դրանց կցվող գործիքներ) ախտահանման հետ չհամակցված նախամանրէազերծման մշակման (եզրափակիչ՝ էնդոսկոպների բարձր մակարդակի ախտահանումից առաջ), ձեռքով և մեքենայացված եղանակներով, ավտոմատացված կայանքներում, այդ թվում գերձայնային (օրինակ՝ «Մեդել», «Ուլտրաէստ», «Կրիստալ», «Սերգա», «Կրոնտ-Ուդէ» և այլն),
- 21) ալգինատային, սիլիկոնային նյութերից, պոլիէթերային խեժից պատրաստված ատամնաբուժական տպվածքների, մետաղներից, կերամիկայից, պլաստմասե և այլ նյութերից պատրաստված ատամնապրոթեզային կաղապարների, արտիկուլյատորների ախտահանման համար,
- 22) թքարտաձծիչների ծայրադիրների, ատամնաբուժական կայանքների արտաձծող համակարգերի, ասպիրացիոն կայանքների, հավաքման տարաների, թքամանների ախտահանման համար,
- 23) սոցիալական ծառայություններ տրամադրող, մշակութային, սպասարկման ոլորտի, սպորտա-առողջարարական նշանակության օբյեկտներում, բոլոր տեսակի փոխադրամիջոցների, առևտրային և այլ հասարակական, ֆինանսական, կրեդիտային,

արտադրական և այլ օբյեկտներում կանխարգելիչ ախտահանման և հիմնական մաքրում իրականացնելու համար,

24) սենքերի, կոշտ և փափուկ կահույքի, կահավորանքի պարագաների, հատակի հարթ և գորգե ծածկույթների, ապարատների, սարքերի, տեխնոլոգիական սարքավորումների, գույքի արտաքին մակերեսների, տարաների, սպասքի (այդ թվում միանվագ օգտագործման), սպասք լվանալու պարագաների, չափման և դոզավորման միջոցների ախտահանման համար,

25) սպիտակեղենի, ծածկոցների, վերնազգեստների, գլխարկների, անջրանցիկ ներքնակների (այդ թվում պոլիուրետանային ծածկույթով), անկողնային և տակդիրային մոմլաթների, խաղալիքների, մարզագույքի, մարզասարքերի, անձնական հիգիենայի պարագաների, սանիտարատեխնիկական սարքավորումների, մաքրման պարագաների, ռետինե և պոլիպրոպիլենային գորգերի ախտահանման համար,

26) վարսավիրանոցների, գեղեցկության սրահների, կոսմետիկ և կոսմետոլոգիական կաբինետների գործիքների ախտահանման և նախամանրէազերծման (այդ թվում համակցված մեկ գործընթացի մեջ) համար,

27) վարսավիրանոցների, գեղեցկության սրահների, կոսմետիկ միջամտություններ իրականացնող կազմակերպությունների, տատուաժի սրահների, մերսման սրահների, բաղնիքների, սաունաների, ակումբների և բնակչության սպասարկման ոլորտի այլ օբյեկտների հատուկ սարքավորումների, արտահագուստի արտաքին մակերեսների ախտահանման համար,

28) սոլյարիներում մակերեսների և աքսեսուարների ախտահանման համար,

29) մթերային շուկաներում և առևտրային տարածքներում առևտրային տաղավարների կրպակների ախտահանման համար,

30) բորբոսասնկերով ախտահարված մակերեսների ախտահանման համար,

31) հեռախոսների, ֆաքսերի, պատճենասարքերի և այլ օրգտեխնիկայի արտաքին մակերեսների ախտահանման համար,

32) թղթադրամների և մետաղադրամների հաշվիչների, տարադրամների և ակցիզների դետեկտորների, փաստաթուղթ ոչնչացնելու սարքերի, պահոցային պահարանների և ստելաժների արտաքին մակերեսների ախտահանման համար,

- 33) ռետինե, պլաստիկից և այլ պոլիմերային նյութերից պատրաստված կոշիկների կանխարգելիչ մշակման համար,
- 34) օդափոխության և օդակարգավորման համակարգերի (կենցաղային օդորակիչներ, սպլիտ համակարգեր, մուլտիզոնային սպլիտ-համակարգեր, տանիքային օդորակիչներ, օդափոխման ֆիլտրեր և այլն) ախտահանման համար,
- 35) սննդային և կենցաղային թափոնների ախտահանման և դեզոդորացման համար՝ դրանց օգտահանումից առաջ (ոչնչացումից),
- 36) աղբատարների, աղբահավաք սարքավորումների և աղբարկղների ախտահանման, մաքրման, լվացման և դեզոդորացման համար:

2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՅԹԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

13. Միջոցի աշխատանքային լուծույթները պատրաստում են ցանկացած նյութից պատրաստված տարաների մեջ՝ միջոցը սենյակի ջերմաստիճանի ջրմուղի ջրում լուծելու ճանապարհով՝ համաձայն սույն հրամանի աղյուսակ 1-ի պահանջների:
14. Պահպանման համար պատրաստված աշխատանքային լուծույթները պահում են հերմետիկ փակվող կափարիչներ ունեցող տարաների մեջ:
15. Զուգարանի բաքում աշխատանքային լուծույթները պատրաստում են՝ համաձայն սույն հրամանի աղյուսակ 2-ի:
16. Արգելվում է խառնել ախտահանիչ միջոցը այլ լվացող կամ ախտահանող միջոցների հետ:

Ախտահանիչ միջոցի աշխատանքային լուծույթների պատրաստում

Աշխատանքային լուծույթի խտություն, ըստ պատրաստուկի %	Պատրաստման համար անհրաժեշտ միջոցի և ջրի (մլ) քանակ			
	1 Լ լուծույթ		10 Լ լուծույթ	
	Միջոց	Ջուր	Միջոց	Ջուր
0,01	0,1	999,9	1	9999,0
0,05	0,5	999,5	5	9995,0
0,1	1,0	999,0	10	9990,0
0,25	2,5	997,5	25	9975,0
0,5	5,0	995,0	50	9950,0
1,0	10	990,0	100	9900,0
2,0	20	980,0	200	9800,0
3,0	30	970,0	300	9700,0
4,0	40	960,0	400	9600,0

Ջուգարանի բաքում աշխատանքային լուծույթի պատրաստում

Բաքի տարողություն, Լ	Բաղադրիչների քանակ		Աշխատանքային լուծույթի ստացվող ծավալ լիտրով
	Միջոց, մլ	Ջուր, Լ	
300	22,5	22,48	22,5
250	18,8	18,78	18,8

200	15,0	14,98	15,0
150	11,2	11,19	11,2
100	7,5	7,49	7,5
50	3,8	3,79	3,8

3. ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

17. Ախտահանումն իրականացնում են շփման, ոռոգման, թրջման (ընկղմման) եղանակներով: Միջոցի լուծույթներով օբյեկտների ախտահանումը տարբեր վարակների ժամանակ իրականացվում է համաձայն սույն հրահանգի աղյուսակներ 3-13-ի ախտահանման ռեժիմների:

18. Օբյեկտների ախտահանումն իրականացնում են մարդկանց ներկայությամբ, առանց շնչառական օրգանների պաշտպանության միջոցների (բացառությամբ ոռոգման եղանակով օբյեկտների ախտահանումը և օդի աէրոզոլային հեղուկացրումն ու ախտահանումը):

19. Միջոցի աշխատանքային լուծույթները կարելի է կիրառել բազմակի (աշխատանքային լուծույթների պիտանելիության ժամկետի՝ 41 օրվա ընթացքում) ընկղմման եղանակով օբյեկտների մշակման ժամանակ, մինչև դրանց արտաքին տեսքի փոփոխությունը (գույնի փոփոխություն, լուծույթի պղտորվածություն, նստվածքի առաջացում): Արտաքին տեսքի փոփոխության առաջին նշանների ժամանակ լուծույթն անհրաժեշտ է փոխել:

20. Սենքերում մակերեսները (հատակ, պատ և այլն), կահավորանքի առարկաները, սարքավորումների, փոխադրամիջոցների մակերեսները շփում են միջոցի լուծույթով թրջված լաթով՝ 100 մլ/մ² մակերես ծախսի նորմայով: Ախտահանումից հետո մակերեսների վրայից միջոցի աշխատանքային լուծույթի լվացում չի պահանջվում, բացառությամբ այն մակերեսների, որոնք շփվում են սպասքի, սննդամթերքի, մթերային

հումքի հետ: Մակերեսների խիստ աղտոտման ժամանակ իրականացվում է դրանց երկակի մշակում:

21. Օբյեկտների մշակումը ոռոգման եղանակով իրականացնում են հատուկ սարքավորումներով (ավտոմաքս և այլ ապարատներ), հասնելով հավասարաչափ և առատ թրջման: Միջոցի ծախսի նորման ոռոգման ժամանակ 300 մ/մ^2 (հիդրոպուլտ, ավտոմաքս) կամ 150 մ/մ^2 («Կվազար» տեսակի հեղուկացրիչ): Ոռոգման եղանակով կիրառումից հետո ախտահանիչ լուծույթի ավելցուկը հեռացնում են չոր մաքուր լաթով: Ախտահանիչ պահաժամի լրանալուց հետո սպասքի, սննդամթերքի, մթերային հումքի հետ շփվող մակերեսները անհրաժեշտ է լվանալ ջրով:

22. Սանիտարական տրանսպորտը վարակիչ հիվանդներ տեղափոխելուց հետո մշակում են համապատասխան վարակների ժամանակ հանձնարարվող ռեժիմներին համապատասխան՝ համաձայն սույն հրամանի աղյուսակներ 3-8-ում ներկայացված ախտահանման ռեժիմների:

23. Սանիտարա-տեխնիկական սարքավորումները (լոգարան, լվացարան, զուգարանակոնք և այլն) միջոցի լուծույթով մշակում են երկակի 15 րոպե միջակայքով խոզանակի օգնությամբ, ախտահանման ավարտից հետո այն լվանում ջրով: Լուծույթի ծախսի նորման մեկ մշակման համար՝ շփման ժամանակ՝ 100 մ/մ^2 մակերես, ոռոգման ժամանակ՝ 300 մ/մ^2 (հիդրոպուլտ, ավտոմաքս) կամ 150 մ/մ^2 («Կվազար» տեսակի հեղուկացրիչ)՝ համաձայն սույն հրամանի 3-7-ում ներկայացված ախտահանման ռեժիմների:

24. Անջրաթափանց ներքնակների, անկողնային և տակդիր մոմլաթների մակերեսը, այդ թվում վարակիչ հիվանդներից հետո, շփում են ախտահանիչ միջոցի լուծույթով առատորեն թրջված գործվածքային և ոչ գործվածքային աճեռոցիկով՝ 100 մ 1 մ^2 մակերես ծախսի նորմայով: Ախտահանման պահաժամից հետո մշակված մակերեսը շփում են չոր գործվածքով: Այլ ցուցանիշներով մշակումն իրականացնում են միջոցի լուծույթի մեջ թրջման եղանակով՝ ելնելով 4 և 1 կգ մշակվող նյութին հաշվարկից: Ախտահանման ավարտից հետո ներքնակների ծածկոցները, անկողնային և տակդիր մոմլաթները պարզաջրում են: Ախտահանումն իրականացվում է՝ համաձայն սույն հրամանի աղյուսակներ 3-7-ում ներկայացված ախտահանման ռեժիմների:

25. Կոշիկի ներքին մակերեսը երկակի շփում են միջոցի լուծույթի մեջ առատորեն թրջված վիրախծուծով՝ համաձայն սույն հրամանի աղյուսակ 6-ի: Պահաժամի լրանալուց հետո մշակվող մակերեսը շփում են խոնավ գործվածքով և չորացնում: Ռետինե, պլաստմասե և այլ սինթետիկ նյութերից պատրաստված կոշիկները ախտահանում են լուծույթի մեջ ընկղմման եղանակով՝ խոչընդոտելով դրա լողալուն: Ախտահանումից հետո լվանում են ջրով:

26. Լաբորատոր և սննդի մնացորդներից ազատված ճաշի սպասքը ամբողջությամբ ընկղմում են ախտահանիչ լուծույթի մեջ՝ ելնելով 2լ՝ 10 միավորի համար հաշվարկից: Վարակիչ հիվանդությունների գործունեություն իրականացնող բժշկական կազմակերպություններում և բաժանմունքներում սննդի մնացորդներով սպասքն ընկղմում են ախտահանիչ լուծույթի մեջ, ելնելով 2 և 5 միավորի համար հաշվարկից: Ախտահանման ավարտից հետո սպասքը լվանում են ջրով 3 րոպեի ընթացքում:

27. Մակերեսների, սպասքի, պարագաների և իրերի ախտահանումը լաբորատորիաներում կատարվում է սանիտարա-համաճարակային նորմերի և կանոնների գործող պահանջներին համապատասխան՝ համաձայն սույն հրամանի աղյուսակներ 3-8-ում ներկայացված ախտահանման ռեժիմների:

28. Սպիտակեղենը, արտահագուստը (ներառյալ մանրէային, սնկային և վիրուսային ծագման վարակների ժամանակ արտադրություններով և արյունով աղտոտված) թրջում են միջոցի լուծույթի մեջ՝ ելնելով 4 և լուծույթ 1 կգ չոր սպիտակեղենի համար հաշվարկից՝ համաձայն սույն հրամանի աղյուսակներ ըստ 3-8-ում ներկայացված ախտահանման ռեժիմների: Ախտահանիչ միջոցի ծախսի նորման տուբերկուլոզի և աղիքային վարակաների դեպքում սպիտակեղենի ախտահանման ժամանակ կազմում է 5 և 1 կգ չոր սպիտակեղենի համար:

29. Ախտահանիչ միջոցը կարելի է կիրառել սպիտակեղենի ախտահանման և լվացման համար՝ մեկ գործողության մեջ համակցված, բոլոր տեսակի լվացքի մեքենաների մեջ, լվացքի մեքենայի շահագործման հրահանգին համապատասխան՝ համաձայն սույն հրամանի աղյուսակ 11-ի: Լվացման ռեժիմն ընտրելիս ավելացնում են լրացուցիչ պարզաջրման ռեժիմ:

30. Հիվանդի խնամքի պարագաները, խաղալիքները, մարզական գույքը, ռետինե և պոլիպրոպիլենե գորգերն ընկղմում են միջոցի լուծույթի մեջ կամ շփում են լուծույթով թրջված լաթով՝ համաձայն սույն հրամանի աղյուսակներ 3-7-ում ներկայացված ռեժիմների: Ախտահանիչ պահաժամի ավարտից հետո դրանք լվանում են ջրմուղի ջրով: Միջոցը կիրառվում է դեզպատնեշները և դեզգորգերը ողողելու համար՝ համաձայն սույն հրամանի աղյուսակներ 3-5-ում ներկայացված ախտահանման ռեժիմների:

31. Օդափոխության և օդակարգավորման համակարգերի ախտահանումը կատարում են դրանց լրիվ անջատման պայմաններում՝ օդափոխության ճարտարագետի ղեկավարությամբ՝ համաձայն սույն հրահանգի աղյուսակ 13-ի ախտահանման ռեժիմների:

32. Օդափոխիչ համակարգերի օդատար խողովակների ախտահանումը կատարվում է ոռոգման եղանակով (մանրադիսպերսային հեղուկացրում), օդափոխիչ սարքավորմանը՝ ոռոգման, շփման կամ ընկղմման եղանակով: Օդային ֆիլտրն ախտահանվում է ոռոգման կամ ընկղմման եղանակով, կամ էլ փոխարինվում է: Ածխե ֆիլտրը ենթակա է փոխարինման: Ռադիատորային վանդակաճաղը և կոնդենսատի կուտակիչը մշակում են ոռոգման եղանակով կամ շփում են ախտահանիչ լուծույթի մեջ թրջված լաթով: Ախտահանումից հետո համակարգի մշակված մասերը լվանում են ջրմուղի ջրով և չորացնում են:

33. Օդի ախտահանումը սենքերում իրականացնում են աերոզոլային հեղուկացրման եղանակով՝ համաձայն սույն հրամանի աղյուսակ 13-ի, միջոցի խաժսը 8-10 մլ/մ² հաշվարկով: Սենքերը նախապես հերմետիկ փակում են՝ ներհոս-արտաձիգ օդափոխանակության համակարգը անջատելով: Օդի ախտահանումից սենքը օդափոխում են 15 րոպե և իրականացնում խոնավ մաքրում:

34. Կուվեզի մակերեսները մանրակրկիտ շփում են միջոցի լուծույթի մեջ թրջված լաթով՝ համաձայն սույն հրամանի աղյուսակ 11-ի: Ախտահանման ավարտից հետո կուվեզի մակերեսները շփում են երկակի՝ մանրէազերծ խմելու ջրով առատորեն թրջված մանրէազերծ գործվածքե անձեռոցիկով, այնուհետև չորացնում են: Խոնավեցման ռեզերվուարը, մետաղական ալեմարիչ հարմարանքները, օդահավաք խողովակները, ռետինե խողովակները, թթվածին մատակարարող հանգույցը ամբողջությամբ ընկղմում

են միջոցի աշխատանքային լուծույթով լցված տարայի մեջ: Ախտահանման ավարտից հետո բոլոր հարմարանքները լվանում են մանրէազերծ ջրի մեջ երկակի ընկղմման եղանակով՝ 3 րոպե յուրաքանչյուր ընկղմումը, ջուրը մղելով խողովակների և ռետինե խողովակների միջով: Հարմարանքները չորացնում են մանրէազերծ գործվածքե անձեռոցիկների օգնությամբ: Կուլեզների մշակման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել կուլեզներն արտադրողի գործող նորմատիվային փաստաթղթերի և հանձնարարականների ցուցումները:

35. Բարոկամերաների և օքսիգենոբարոթերապիայի համար նախատեսված այլ սարքավորումների ներքին և արտաքին մակերեսները շփում են միջոցի լուծույթի մեջ թրջված լաթով՝ համաձայն սույն հրամանի աղյուսակներ 3-7-ի ախտահանման ռեժիմների: Ախտահանման ավարտից հետո մակերեսները երկակի շփում են ջրի մեջ թրջված գործվածքե անձեռոցիկներով, այնուհետև չորացնում:

36. Բորբոսասնկերի դեմ պայքարելու համար օբյեկտները մաքրում են խոզանակի օգնությամբ, այնուհետև երկակի՝ 15 րոպե միջակայքով մշակում են միջոցի լուծույթով՝ համաձայն սույն հրամանի աղյուսակ 8-ի:

37. Մաքրման սարքավորումները և գույքն ընկղմում կամ շփում են, մաքրման նյութը թրջում են միջոցի լուծույթի մեջ, ախտահանման ավարտից հետո պարզաջրում և չորացնում են՝ համաձայն սույն հրամանի աղյուսակներ 3-8-ի ախտահանման ռեժիմների:

38. Մակաբուծային հիվանդությունների հարուցիչներով (նախակենդանիների ցիստեր և օոցիստեր, ձվեր և թրթուրներ) բաղարկված հողի ախտահանումը (դեզինվազիան) կատարվում է ախտահանիչ միջոցի 3 % լուծույթով 12 ժամ պահաժամով՝ լուծույթի 4 լ հողի մեկ քառակուսի մետրի համար ծախսի հաշվարկով:

39. Մակաբուծային հիվանդությունների հարուցիչների նկատմամբ օբյեկտների ախտահանումը իրականացվում է համաձայն սույն հրամանի աղյուսակ 7-ի ախտահանման ռեժիմների:

40. Անաէրոբ վարակների հարուցիչների նկատմամբ օբյեկտների ախտահանումն իրականացվում է՝ համաձայն սույն հրամանի աղյուսակ 5-ի, իսկ սենքերի հիմնական մաքրումը՝ աղյուսակ 10-ի ախտահանման ռեժիմների:

41. Առողջապահական կազմակերպությունների բժշկական թափոնները օգտահանումից առաջ ախտահանվում են համաձայն սույն հրամանի աղյուսակներ 12-ի ախտահանման ռեժիմների, իսկ դրանց հավաքման բեռնարկերի, ավտոմեքենաների թափքի ախտահանումը՝ համաձայն աղյուսակներ 3-7-ի ախտահանման ռեժիմների:

42. Սննդի մնացորդները խառնում են ախտահանիչ լուծույթի հետ 1:1 հարաբերությամբ, թողնում են պահաժամի չափով:

Աղյուսակ 3

**Ախտահանիչ միջոցի աշխատանքային լուծույթներով օբյեկտների ախտահանման
ռեժիմներ մանրէային
(ներառյալ տուբերկուլոզը) վարակների ժամանակ**

Ախտահանման օբյեկտ	Աշխատանքային լուծույթի խտություն (ըստ պատրաստուկի), %	Ախտահանման պահաժամ, րոպե		Ախտահանման եղանակ
		ախտահանման ռեժիմներ մանրէային վարակների ժամանակ, բացի տուբերկուլոզից	ախտահանման ռեժիմներ տուբերկուլոզի ժամանակ	
Սենքերում մակերեսներ (հատակ, պատեր և այլն), սանիտարական տրանսպորտ, գույքի պարագաներ, կոշտ կահույք, ապարատներ, սարքավորումներ և այլն	0,01	60	-	Շփում կամ ռոզոզում
	0,05	30	-	
	0,1	15	-	
	0.25	5	60	
	0.5	-	30	
	1.0	-	15	
Սանիտարա- տեխնիկական սարքավորում	0,01	60	-	Շփում կամ ռոզոզում
	0,05	30	-	
	0,1	15	-	
	0.25	-	60	
	0.5	-	30	
	1.0	-	15	
	0,01	60	-	

Սպասք՝ առանց սննդի մնացորդի	0,05	30	-	Ընկղմում
	0,1	15	-	
	0.25	-	60	
	0.5	-	30	
	1.0	-	15	
Սպասք՝ սննդի մնացորդով	0.05	60	-	Ընկղմում
	0.1	30	-	
	0.25	15	-	
	0.5	-	60	
	1.0	-	30	
	2.0	-	15	
Լաբորատոր սպասք, սպասքը լվանալու պարագաներ	0.05	60	-	Ընկղմում
	0.1	30	-	
	0.25	15	-	
	0.5	-	60	
	1.0	-	30	
	2.0	-	15	
Սպիտակեղեն, արտահագուստ՝ չաղտոտված կենսաբանական նյութերով	0,01	60	-	Թրջում
	0,05	30	-	
	0,1	15	-	
	0.25	-	60	
	0.5	-	30	
	1.0	-	15	
Սպիտակեղեն, արտահագուստ՝ աղտոտված կենսաբանական նյութերով	0.05	60	-	Թրջում
	0.1	30	-	
	0.25	15	-	
	0.5	-	60	
	1.0	-	30	
	2.0	-	15	
Անջրաթափանց ներքնակի ծածկոց, անկողնային և տակդիր մոմլաթ՝ չաղտոտված կենսաբանական նյութով	0,01	60	-	Շփում
	0,05	30	-	
	0,1	15	-	
	0.25	-	60	
	0.5	-	30	
	1.0	-	15	
Անջրաթափանց ներքնակի ծածկոց, անկողնային և տակդիր մոմլաթ՝ աղտոտված	0.05	60	-	Թրջում
	0.1	30	-	
	0.25	15	-	
	0.5	-	60	
	1.0	-	30	

կենսաբանական նյութով	2.0	-	15	
Հիվանդի խնամքի պարագաներ, խաղալիքներ	0,01	60	-	Ընկղմում, շփում
	0,05	30	-	
	0,1	15	-	
	0.25	-	60	
	0.5	-	30	
	1.0	-	15	
Ախտահանող գորգեր, պատնեշներ	0.05	+	-	Լցնում
	0.5	-	+	
Օրգանական տեխնիկայի, հեռախոսի, ֆաքսի, պատճենահանման սարքի, համակարգչի և այլ տեխնիկայի բաղադրիչ մասեր	0.05	60	-	Շփում
	0.1	30	-	
	0.25	15	-	
	0.5	-	60	
	1.0	-	30	
	2.0	-	15	
Թղթադրամների և մանրադրամի հաշվիչի, արտարժույթի և ակցիզային դրոշմանիշների դետեկտորի, փաստաթուղթ ոչնչացնող սարքի, պահոցային պահարանների և դարակների արտաքին մակերեսներ	0.05	60	-	Շփում
	0.1	30	-	
	0.25	15	-	
	0.5	-	60	
	1.0	-	30	
	2.0	-	15	

Մաքրման պարագաներ	0.05	60	-	Թրջում, ընկղմում, շփում
	0.1	30	-	
	0.25	15	-	
	0.5	-	60	
	1.0	-	30	
	2.0	-	15	
Աղբարկղներ, աղբահավաքման սարքավորումներ	0,01	60	-	շփում կամ ռոռոգում
	0,05	30	-	
	0,1	15	-	
	0.25	-	60	
	0.5	-	30	
	1.0	-	15	

Աղյուսակ 4

**Ախտահանիչ միջոցի աշխատանքային լուծույթներով օբյեկտների ախտահանման
ռեժիմներ վիրուսային վարակների ժամանակ**

Ախտահանման օբյեկտ	Աշխատանքային լուծույթի խտություն (ըստ պատրաստուկի), %	Ախտահանման ժամանակ, րոպե	Ախտահանման եղանակ
Սենքերում մակերեսներ (հատակ, պատեր և այլն), սանիտարական տրանսպորտ, գույքի պարագաներ, կոշտ կահույք, ապարատներ, սարքավորումներ և այլն	0,1 0,25 0,5 1,0	60 30 15 5	Շփում կամ ռոռոգում

Սանիտարա-տեխնիկական սարքավորում	0,1 0,25 0,5	60 30 15	Շփում կամ ռոռզում
Սպասք՝ առանց սննդի մնացորդի	0,1 0,25 0,5	60 30 15	Ընկղմում
Սպասք՝ սննդի մնացորդներով	0,25 0,5 1,0	60 30 15	Ընկղմում
Լաբորատոր սպասք, սպասքը լվանալու պարագա	0,25 0,5 1,0	60 30 15	Ընկղմում
Սպիտակեղեն, արտահագուստ, չաղտոտված կենսաբանական նյութերով	0,1 0,25 0,5	60 30 15	Թրջում
Սպիտակեղեն, արտահագուստ, աղտոտված կենսաբանական նյութերով	0,25 0,5 1,0	60 30 15	Թրջում
Անջրաթափանց ներքնակի ծածկոց, անկողնային և տակդիր մոմլաթ՝ չաղտոտված կենսաբանական նյութով	0,1 0,25 0,5	60 30 15	Շփում
Անջրաթափանց ներքնակի ծածկոց, անկողնային և տակդիր մոմլաթ՝ աղտոտված կենսաբանական նյութով	0,25 0,5 1,0	60 30 15	Թրջում
Հիվանդի խնամքի պարագաներ, խաղալիքներ	0,1 0,25 0,5	60 30 15	Շփում կամ ընկղմում
Դեզպատնեշ, դեզգորգ	0,25	-	Լցնում
Կոսմետիկ սարքերի էլեկտրոդներ	0,1 0,25 0,5 1,0	60 30 15	Երկակի շփում

		5	
Մաքրող պարագաներ	0,25 0,5 1,0	60 30 15	Թրջում, շփում կամ ոռոգում
Աղբարկղներ, աղբահավաքման սարքավորումներ	0,1 0,25 0,5	60 30 15	Շփում կամ ոռոգում

Աղյուսակ 5

Ախտահանիչ միջոցի աշխատանքային լուծույթներով օբյեկտների ախտահանման ռեժիմներ կանդիդոզների և դերմատոֆիտների ժամանակ

Ախտահանման օբյեկտ	Աշխատանքային լուծույթի խտություն (ըստ պատրաստուկի), %	Ախտահանման ժամանակ, րոպե		Ախտահանման եղանակ
		Կանդիդոզ	Դերմատոֆիտներ	
Սենքերում մակերեսներ (հատակ, պատեր և այլն), սանիտարական տրանսպորտ, գույքի պարագաներ, կոշտ կահույք, ապարատներ, սարքավորումներ և այլն	0,1 0,25 0,5 1,0 2,0 3,0	60 30 15 5 - -	- 90 60 30 15 5	Շփում կամ ոռոգում
Սանիտարա- տեխնիկական սարքավորում	0,1 0,25 0,5 1,0 2,0	60 30 15 - -	- 90 60 30 15	Շփում կամ ոռոգում
Սպասք՝ առանց սննդի մնացորդի	0,1 0,25 0,5	60 30 15	- - -	Ընկղմում

Սպասք՝ սննդի մնացորդներով	0,25	60	-	Ընկղմում
	0,5	30	-	
	1,0	15	-	
Լաբորատոր սպասք, սպասքը լվանալու պարագա	0,25	60	-	Ընկղմում
	0,5	30	-	
	1,0	15	60	
	2,0	-	30	
Սպիտակեղեն, արտահագուստ՝ չաղտոտված կենսաբանական նյութերով	0,1	60	-	Թրջում
	0,25	30	90	
	0,5	15	60	
	1,0	-	30	
	2,0	-	15	
Սպիտակեղեն, արտահագուստ՝ աղտոտված կենսաբանական նյութերով	0,25	60	-	Թրջում
	0,5	30	90	
	1,0	15	60	
	2,0	-	30	
	3,0	-	15	
Անջրաթափանց ներքնակի ծածկոց, անկողնային և տակդիր մոմլաթ՝ չաղտոտված կենսաբանական նյութով	0,1	60	-	Շփում
	0,25	30	90	
	0,5	15	60	
	1,0	-	30	
	2,0	-	15	
Անջրաթափանց ներքնակի ծածկոց, անկողնային և տակդիր մոմլաթ՝ աղտոտված կենսաբանական նյութով	0,25	60	-	Թրջում
	0,5	30	90	
	1,0	15	60	
	2,0	15	30	
	3,0	-	15	
	-	-	-	
Հիվանդի խնամքի պարագաներ,	0,1	60	-	Շփում կամ ոռոգում
	0,25	30	90	
	0,5	15	60	

խաղալիքներ, մարզագույք	1,0	-	30	
	2,0	-	15	
Մաքրող պարագաներ	0,25	60	-	Թրջում, շփում կամ ոռոգում
	0,5	30	90	
	1,0	15	60	
	2,0	-	30	
	3,0	-	15	
Կաշվե և արհեստական կաշվե կոշիկներ	0,5	-	90	Երկակի շփում 15 րոպե ընդմիջումով
	1,0	-	60	
	2,0	-	30	
	3,0	-	15	
Լոգանքի սանդալներ, հողաթափեր և այլն՝ պատրաստված կաուչուկից, պլաստմասսայից և այլն, սինթետիկ նյութեր, հատուկ նշանակության անոթներ	0,25	-	90	Թրջում, շփում կամ ոռոգում
	0,5	-	60	
	1,0	-	30	
	2,0	-	15	
Ռետինե և պոլիպրոպիլենից գորգեր, ոտքի տակի բարձիկներ	0,25	-	90	Շփում կամ ընկղմում
	0,5	-	60	
	1,0	-	30	
	2,0	-	15	
Ախտահանիչ գորգեր, պատնեշներ	0,1	+	-	Լցնում
	0,25	-	+	
Աղբարկղներ, աղբահավաքման սարքավորումներ, աղբատար խողովակներ	0,25	-	90	Երկակի շփում կամ ոռոգում 15 րոպե ընդմիջումով
	0,5	-	60	
	1,0	-	30	
	2,0	-	15	

**Ախտահանիչ միջոցի աշխատանքային լուծույթներով օբյեկտների ախտահանման
ռեժիմներ անաէրոբ վարակների ժամանակ**

Ախտահանման օբյեկտ	Աշխատանքային լուծույթի խտություն (ըստ պատրաստուկի), %	Ախտահանման ժամանակ, րոպե	Ախտահանման եղանակ
Սենքերում մակերեսներ (հատակ, պատեր և այլն), սանիտարական տրանսպորտ, գույքի պարագաներ, կոշտ կահույք, ապարատներ, սարքավորումներ և այլն	0,25 0,5 1,0	60 30 15	Շփում կամ ռոզզում
Սանիտարա- տեխնիկական սարքավորում	0,25 0,5 1,0	60 30 15	Շփում կամ ռոզզում
Սպասք՝ առանց սննդի մնացորդի	0,25 0,5 1,0	60 30 15	Ընկղմում
Սպասք՝ սննդի մնացորդներով	0,5 1,0 2,0	60 30 15	Ընկղմում
Լաբորատոր սպասք, սպասքը լվանալու պարագա	0,5 1,0 2,0	60 30 15	Ընկղմում
Սպիտակեղեն, արտահագուստ՝ չաղտոտված կենսաբանական նյութերով	0,25 0,5 1,0	60 30 15	Թրջում
Սպիտակեղեն, արտահագուստ՝ աղտոտված կենսաբանական նյութերով	0,5 1,0 2,0	60 30 15	Թրջում

Անջրաթափանց ներքնակի ծածկոց, անկողնային և տակդիր մոմլաթ՝ չաղտոտված կենսաբանական նյութով	0,25 0,5 1,0	60 30 15	Շփում
Անջրաթափանց ներքնակի ծածկոց, անկողնային և տակդիր մոմլաթ՝ աղտոտված կենսաբանական նյութով	0,5 1,0 2,0	60 30 15	Թրջում
Հիվանդի խնամքի պարագաներ, խաղալիքներ, սպորտային գույք	0,25 0,5 1,0	60 30 15	Շփում կամ ոռոգում
Մաքրող պարագաներ	0,5 1,0 2,0	60 30 15	Թրջում, շփում կամ ոռոգում
Աղբարկղներ, աղբահավաքման սարքավորումներ	0,25 0,5 1,0	60 30 15	Շփում և ոռոգում

**Ախտահանիչ միջոցի աշխատանքային լուծույթներով օբյեկտների ախտահանման
ռեժիմներ մակաբուծային հիվանդությունների ժամանակ**

Ախտահանման օբյեկտ	Աշխատանքային լուծույթի խտություն (ըստ պատրաստուկի), %	Ախտահանման ժամանակ, րոպե	Ախտահանման եղանակ
Սենքերում մակերեսներ (հատակ, պատեր և այլն), սանիտարական տրանսպորտ, գույքի պարագաներ, կոշտ կահույք, ապարատներ, սարքավորումներ և այլն	0,25 0,5 1,0 2,0 3,0	90 60 30 15 5	Երկակի շփում կամ ոռոգում 15 րոպե ընդմիջումով
Գործիքներ	0,5 1,0 2,0	60 30 15	Ընկղմում
Սանիտարա-տեխնիկական սարքավորում	0,5 1,0 2,0	60 30 15	Երկակի շփում կամ ոռոգում 15 րոպե ընդմիջումով
Սպասք, խոհանոցային պարագաներ՝ առանց սննդի մնացորդի	0,5 1,0 2,0	60 30 15	Ընկղմում
Սպասք խոհանոցային պարագաներ՝ սննդի մնացորդներով	1,0 2,0 3,0	60 30 15	Ընկղմում
Լաբորատոր սպասք, սպասքը լվանալու պարագաներ	1,0 2,0 3,0	60 30 15	Ընկղմում

Ախտորոշիչ նյութերի՝ ներառյալ կղանքի և կենսաբանական հեղուկների տարաներ	1,0 2,0 3,0	60 30 15	Ընկղմում
Սպիտակեղեն, արտահագուստ՝ չաղտոտված կենսաբանական նյութերով	0,5 1,0 2,0	60 30 15	Թրջում
Սպիտակեղեն, արտահագուստ՝ աղտոտված կենսաբանական նյութերով	1,0 2,0 3,0	60 30 15	Թրջում
Անջրաթափանց ներքնակի ծածկոց, անկողնային և տակդիր մոմլաթ՝ չաղտոտված կենսաբանական նյութով	0,5 1,0 2,0	60 30 15	Շփում
Անջրաթափանց ներքնակի ծածկոց, անկողնային և տակդիր մոմլաթ՝ աղտոտված կենսաբանական նյութով	1,0 2,0 3,0	60 30 15	Թրջում
Հիվանդի խնամքի պարագաներ, խաղալիքներ, սպորտային գույք	0,5 1,0 2,0	60 30 15	Թրջում, ոռոգում կամ երկակի շփում 15 րոպե ընդմիջումով
Մաքրող պարագաներ, անհատական պաշտպանիչ միջոցներ	1,0 2,0 3,0	60 30 15	Թրջում, ոռոգում կամ երկակի շփում 15 րոպե ընդմիջումով
Թափոններ՝ ներառյալ ձեռնոցները	1,0 2,0 3,0	60 30 15	Թրջում, շփում կամ ոռոգում
Ախտորոշման նյութեր	1,0 2,0 3,0	60 30 15	Թրջում, շփում կամ ոռոգում
Աղբարկղներ, աղբահավաքման սարքավորումներ	0,5 1,0 2,0	60 30 15	Երկակի շփում 15 րոպե ընդմիջումով

**Ախտահանիչ միջոցի աշխատանքային լուծույթներով օբյեկտների ախտահանման
ռեժիմներ բորբոսասնկերի ժամանակ**

Ախտահանման օբյեկտ	Աշխատանքային լուծույթի խտություն (ըստ պատրաստուկի), %	Ախտահանման ժամանակ, րոպե	Ախտահանման եղանակ
Սենքերում մակերեսներ (հատակ, պատեր և այլն), փոխադրամիջոց, գույքի պարագաներ, կահույք, ապարատներ, սարքավորումներ և այլն	0,5 1,0 2,0 3,0	60 30 15 5	Երկակի շփում կամ ոռոգում 15 րոպե ընդմիջումով
Սպիտակեղեն, արտահագուստ՝ աղտոտված օրգանական նյութերով	1,0 2,0	60 30	Թրջում
Սպասք՝ սննդի մնացորդներով	1,0 2,0	60 30	Ընկղմում
Լաբորատոր և դեղատնային սպասք	1,0 2,0	60 30	Ընկղմում
Մաքրման պարագաներ, գույք	1,0 2,0	60 30	Շփում, ընկղմում
Ռետինե և պոլիպրոպիլենային գորգեր	1,0 2,0	60 30	Շփում կամ ընկղմում

Սպիտակեղենի, արտահագուստի լվացում համակցված մեկ գործընթացում

Վարակիչ հիվանդություն	Սպիտակեղեն՝ չաղտոտված կենսաբանական նյութով		Սպիտակեղեն՝ աղտոտված կենսաբանական նյութով	
	Աշխատանքային լուծույթի խտություն, %	Միջոցի քանակ նախատեսված 1 կգ սպիտակեղենի լվացման և ախտահանման համար*	Աշխատանքային լուծույթի խտություն, %	Միջոցի քանակ նախատեսված 1 կգ սպիտակեղենի լվացման և ախտահանման համար*
Մանրէային՝ բացառությամբ տուբերկուլոզը	0,05	2	0,1	4
Տուբերկուլոզ	0,5	20	1,0	40
Վիրուսային	0,25	10	0,5	20
Կանդիդոզ	0,25	10	0,5	20
Դերմատոֆիտներ	1,0	40	2,0	80
Անաէրոբ վարակների հարուցիչներ	0,5	20	1,0	40
Մակարուծային հիվանդությունների հարուցիչներ	1,0	40	2,0	80

Նշում՝ «*» Իրականացվում է 1 կգ չոր սպիտակեղեն և 4 լ ջրի հաշվարկով, 30 րոպե պահածամի և 60°C ջերմաստիճանի պայմանների դեպքում (սպիտակեղենի ողողման և քամելու ժամանակահատվածը չհաշված):

Աղյուսակ 10.

Օբյեկտների ախտահանման ռեժիմներ* հիմնական մաքրման ժամանակ

Բժշկական կազմակերպության գործունեության տեսակ	Աշխատանքային լուծույթի խտություն, %	Ախտահանման պահածամ, րոպե	Ախտահանման եղանակ
Սոնատիկ, վիրաբուժական բաժանմունք, միջամտությունների սենք, ատամնաբուժական, մանկաբարձա- գինեկոլոգիական	0,1 0,25 0,5 1,0	60 30 15 5	Շփում, Ոռոգում

բաժանմունք և կաբինետ, լաբորատորիա և այլ			
Հակատուբերկուլոզային գործունեության տեսակ իրականացնող բժշկական կազմակերպություններ	0,25 0,5 1,0 2,0	60 30 15 5	Շփում, Ոռոգում
Վարակիչ հիվանդությունների գործունեության տեսակ իրականացնող բժշկական կազմակերպություններ	Վարակիչ հիվանդության ախտահանման ռեժիմին համապատասխան		Շփում, Ոռոգում
Մաշկա-վեներաբանական գործունեության տեսակ իրականացնող բժշկական կազմակերպություններ	0,25 0,5 1,0 2,0 3,0	90 60 30 15 5	Շփում, Ոռոգում
Սպասարկման ոլորտի, սոցիալական ծառայություն տրամադրող օբյեկտներ, մանկական, կրթական, հաստատություններ	0,01 0,05 0,1 0,25	60 30 15 5	Շփում, Ոռոգում

Նշում՝ «*» Ապահովվում է գրամդրական և գրամբացասական մանրէների (ներառյալ տուբերկուլոզը), ներհիվանդանոցային և անաէրոբ մանրէների, բորբոսասնկերի և պաթոգեն սնկերի, ինչպես նաև Կանդիդա, Տրիխաֆիտոն տեսակի սնկերի, վիրուսների՝ (Կոկսակի, ECHO, պոլիոմիելիտ, էնտերալ, պարենտերալ հեպատիտների, գրիպի, հերպես վիրուսի, ադենովիրուսի և այլ վիրուսների) ոչնչացումը:

Աղյուսակ 11

Կուլեզների և դրան մասերի ախտահանման ռեժիմներ

Ախտահանման օբյեկտ	Աշխատանքային լուծույթի խտություն, %	Ախտահանման պահաժամ, րոպե	Ախտահանման եղանակ
Կուլեզի մակերես	0,1 0,25	60 30	Շփում
Կուլեզի հարմարանքներ և մասեր	0,1 0,25	60 30	Ընկղմում

Նշում՝ «*» Ախտահանումն ապահովվում է՝ մանրէային վարակների (ներառյալ տուբերկուլոզ) դեպքում, վիրուսային (ներառյալ ադենովիրուսները, գրիպի վիրուսները, պարադրիպի ու սուր շնչառական վարակների այլ վիրուսների, էնտերովիրուսների, ռոտավիրուսների, պոլիոմիելիտի վիրուսի, ՄԻԱՎ վարակի, Ընդերային և արտաընդերային հեպատիտի, հերպեսի, ատիպիկ թոքաբորբի, թոչնագրիպի, խոզի գրիպի և այլն), սնկային (կանդիդոզ, մաշկաֆիտոզ) էթիոլոգիայի ժամանակ:

Բժշկական, սննդային և այլ թափոնների ախտահանման ռեժիմներ

Թափոնի տեսակ	Վարակիչ հիվանդության տեսակ	Մշակվող պարագա	Ախտահանման ռեժիմ				
			Աշխատանքային լուծույթի խտություն, %	Ախտահանման պահաժամ, րոպե	Ախտահանման եղանակ		
Բժշկական թափոններ	Ե դասի թափոններ (բացառությամբ տուբերկուլոզի, վիրուսային վարակների և կանդիդոզների)	Վիրակապան նյութ, բամբակյա և թանգիվե խճուժ, միանվագ օգտագործման սպիտակեղեն, անձնակազմի արտահագուստ	0,1 0,25	60 30	Ընկղմում Թրջում Ոռոգում		
		Միանվագ օգտագործման բժշկական իրեր	0,1 0,25 0,5	60 30 15			
		Բ դասի թափոններ (ներառյալ տուբերկուլոզի, վիրուսային վարակների և կանդիդոզների և դերմատոֆիտների)	Վիրակապան նյութ, բամբակյա և թանգիվե խճուժ, միանվագ օգտագործման սպիտակեղեն, անձնակազմի արտահագուստ	0,25 0,5 1,0		90 60 30	
			Միանվագ օգտագործման բժշկական իրեր	0,25 0,5 1,0 2,0		90 60 30 15	
	Սննդի մնացորդ			0,25 0,5 1,0		60 30 15	Խառնում են աշխատանքային լուծույթի հետ 1:1 հարաբերությամբ՝ պահման պահաժամի

			պայմանների ապահովմամբ
Ժամկետնանց և վնասված փաթեթով պատվաստանյութ՝ ներառյալ ԲՅԺ	0,25 0,5 1,0	90 60 30	Ընկղմում

Աղյուսակ 13.

Օդի, օդափոխության և օդորակման համակարգերի ախտահանման ռեժիմներ միջոցի լուծույթներով

Ախտահանման օբյեկտ		Լուծույթի խտություն՝ (ըստ պատրաստուկի), %	Ախտահանման ժամանակ, րոպե	Ախտահանման եղանակ
Կենտրոնական և կենցաղային օդորակիչների և ընդհանուր փոխանակային օդափոխության բաժիններ, օդընդունիչ և օդաբաշխիչներ		0,01	60	Շփում կամ ռոտզում
		0,05	30	
		0,1	15	
Օդային ֆիլտրեր		0,25	60	Ընկղմում
		0,5	30	
		1,0	15	
Ռադիատորային վանդակաճաղեր, գլխադիրներ, կոնդենսատի կուտակիչներ		0,01	60	Շփում
		0,05	30	
		0,1	15	
Օդատարներ		0,01	60	Ռոտզում
		0,05	30	
		0,1	15	
Սենքերի օդի մշակում	Մանրէային (բացառությամբ տուբերկուլոզը) վարակների ժամանակ	0,01	60	Ցողացում
		0,05	30	
		0,1	15	
	Տուբերկուլոզի ժամանակ*	0,25	60	
		0,5	30	
		1,0	15	

	Մնկային վարակների ժամանակ	0,5	60	
		1,0	30	
		2,0	15	
	Վիրուսային վարակների ժամանակ	0,1	60	
		0,25	30	
		0,5	15	

4. ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԵՐԻ ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՆԱԽԱՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

43. Միջոցի լուծույթներով բժշկական նշանակության իրերի ախտահանումն իրականացվում է սույն հրամանի 14-20-րդ աղյուսակների ախտահանման ռեժիմներին համապատասխան:

44. Միջոցի լուծույթները ախտահանման նպատակով կիրառվում են բազմակի՝ այդ թվում համակցված նախամանրէազերծման մշակման հետ մեկ գործնթացում (պիտանելիության ժամկետի պահպանման պայմաններում 41 օր): Լուծույթի արտաքին տեսքի փոխվելու դեպքում (պղտորում, գույնի փոփոխություն, նստվածքի առաջացում) այն անմիջապես փոխարինվում է նորով: Աշխատանքային լուծույթը պահվում է հերմետիկ փակ տարաներում:

45. Բժշկական նշանակության իրերի ախտահանումը՝ այդ թվում նախամանրէազերծման հետ համատեղ, իրականացնում են պլաստմասե և էմալապատ (առանց վնասվածքների) կափարիչով փակ տարաներում: Բժշկական նշանակության իրերի ախտահանումը, նախամանրէազերծման մշակումը և մանրէազերծումը իրականացվում է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանի պահանջների:

46. Բժշկական նշանակության իրերի խոռոչները լցնում են ախտահանիչ միջոցի լուծույթով՝ ներարկիչի օգնությամբ՝ բացառելով օդային խցանների առաջացումը: Լուծույթը անցկացնում են խոռոչներով մի քանի անգամ՝ մինչև կենսաբանական աղտոտման հետքերի վերացումը:

47. Քանդվող իրերն ընկղմում են լուծույթի մեջ քանդված վիճակում, փականային մասերով գործիքները թրջում են բացված վիճակում, նախօրոք լուծույթի մեջ դրանցով

մի քանի անգամ աշխատանքային շարժում անելով՝ փականի հատվածում իրի դժվարհասանելի մասերի մեջ լուծույթի լավ թափանցման համար: Միջոցի լուծույթի շերտի հաստությունը իրերի վրա պետք է լինի առնվազն 1 սմ:

48. Ախտահանման պահաժամից հետո իրերը հանում են լուծույթից և լվանում հոսող ջրի տակ 3 րոպե տևողությամբ, իսկ տուբերկուլոզի դեպքում՝ 5 րոպե:

49. Բժշկական նշանակության արտադրատեսակների ախտահանումը իրականացնում են՝ համաձայն սույն հրամանի աղյուսակ 14-ի ախտահանման ռեժիմների, իսկ նախամանրէազերծման մշակման հետ համակցված ախտահանումը՝ համաձայն աղյուսակներ 15-ի ախտահանման ռեժիմների:

50. Բժշկական նշանակության իրերի ձեռքային եղանակով նախամանրէազերծման մշակումը, որը համակցված չէ ախտահանման հետ իրականացնում են՝ համաձայն սույն հրամանի աղյուսակ 17-ի, մեխանիկական եղանակով ուլտրաձայնային սարքերի կիրառմամբ իրականացնելու դեպքում՝ համաձայն աղյուսակ 19-ի ախտահանման ռեժիմների: Էնդոսկոպների ախտահանումը՝ այդ թվում համակցված նախամանրէազերծման հետ մեկ գործընթացում, իրականացնում են համաձայն սույն հրամանի աղյուսակ՝ 16-ի, նախամանրէազերծման մշակումը և վերջնական մաքրումը՝ համաձայն աղյուսակ 18-ի ախտահանման ռեժիմների: Էնդոսկոպների ախտահանումը՝ նախամանրէազերծման և վերջնական մաքրման հետ համակցված մեկ գործընթացում, որն իրականացվում է մեխանիկական եղանակով ուլտրաձայնային սարքերի, կամ լվացող մեքենաների կիրառմամբ իրականացնում են՝ համաձայն աղյուսակ 19-ի ախտահանման ռեժիմների:

51. Բժշկական նշանակության արտադրանքի, էնդոսկոպների, ճկուն էնդոսկոպների բժշկական սարքերի նախնական մաքրումը, նախամանրէազերծման մշակումը, ինչպես նաև ախտահանումը, որը համակցված չէ նախամանրէազերծման հետ, իրականացնում են՝ համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանի պահանջների՝ հաշվի առնելով սարքի արտադրողի առաջարկությունները:

52. Էնդոսկոպների մշակումը սկսվում են Էնդոսկոպիկ միջամտություններից անմիջապես հետո (խորհուրդ է տրվում թույլ չտալ կենսաբանական աղտոտվածության չորացում):

53. Էնդոսկոպի արտաքին մակերեսից, ներառյալ օբյեկտիվը, տեսանելի աղտոտումը հանվում է միջոցի լուծույթում թրջված անձեռոցիկով, կառավարման բլոկից դեպի դիստալ հատված: Փականները, մոմերը հանվում են Էնդոսկոպից, իսկ Էնդոսկոպն անմիջապես ընկղմվում է լուծույթի մեջ՝ ապահովելով բոլոր մակերեսների շփումը լուծույթի հետ: Էնդոսկոպի բոլոր խողոչները լվանում են միջոցի լուծույթով մինչև տեսանելի կենսաբանական աղտոտման վերանալը: Արտադրանքը ընկղմում են աշխատանքային լուծույթի մեջ և լցնելով բոլոր խողոչները, որից հետո լվանում են այնքան, մինչև բոլոր խողոչների տեսանելի աղտոտվածության վերանալը: Արտադրանքը լվանում են նույն լուծույթում, որում վերջինս ընկղմված էր: Լվանալուց հետո արտադրանքը մաքրում են հոսող խմելու ջրով 3 րոպե, որից հետո թորած ջրով՝ 2 րոպե տևողությամբ:

54. Նարկոզա-շնչառական սարքավորումների նախնական լվացումը իրականացնում են հոսող սառը, այնուհետև՝ գոլ ջրով՝ անմիջապես օգտագործումից հետո: Ախտահանման համար սարքավորումը ընկղմում են աշխատանքային լուծույթում ամբողջությամբ լցնելով խողոչները: Սարքավորման հարմարանքները մշակում են միանգամյա օգտագործման թանգիվե կամ բամբակյա վիրախծուծով՝ յուրաքանչյուր հարմարանքը 30 րոպե, այնուհետև լվանում են հոսող ջրի տակ 5 րոպե, որից հետո լվանում են երկու բաժին թորած ջրով և չորացնում մանրէազերծ սպիտակեղենով: Վիրուսային հեպատիտի և տուբերկուլոզի ժամանակ ախտահանումը իրականացվում է առանց նախնական լվացման՝ համաձայն սույն հրամանի աղյուսակ 14-ի ախտահանման ռեժիմների:

55. Ատամնաբուժական տպվածքները, ատամնապրոթեզային կաղապարները միջոցի մեջ նախապես լվանալուց հետո ախտահանում են համաձայն սույն հրամանի աղյուսակ 14-ում ներկայացված ռեժիմների, որից հետո լվանում են հոսող ջրով 0.5 րոպե յուրաքանչյուր կողմից կամ ընկղմում 5 րոպե տևողությամբ և չորացնում: Մեկ չափաբաժին աշխատանքային լուծույթը օգտագործվում է ոչ ավել քան 50 տպվածքի

համար: Աշխատանքային լուծույթի աղտոտումից հետո այն անմիջապես փոխարինվում է նորով:

56. Թքարտածծիչների ծայրադիրների, ատամնաբուժական կայանքների արտածող համակարգերի, ասպիրացիոն կայանքների, հավաքման տարաների, թքամանների ախտահանումն իրականացվում է սույն հրամանի աղյուսակ 14-ի համաձայն: Թքամանները ախտահանելուց հետո լվանում են հոսող ջրով 2 րոպե տևողությամբ:

Աղյուսակ 14.

Ախտահանիչ միջոցի լուծույթով բժշկական նշանակության իրերի ախտահանման ռեժիմներ*

Ախտահանման օբյեկտ	Ախտահանիչ միջոցի աշխատանքային լուծույթի խտություն, %	Ախտահանման պահաժամ, րոպե
Պլաստմասից, մետաղից, ռետինից, ապակուց պատրաստված բժշկական նշանակության իրեր՝ (այդ թվում միանվագ օգտագործման) ներառյալ վիրաբուժական և ատամնաբուժական իրերը, կոշտ և ճկուն էնդոսկոպներ և դրանց գործիքներ, Ատամնապրոթեզային տպվածքներ, կաղապարներ	0,1	60
	0,25	30
	0,5	15
Թքարտածծիչ սարքեր, ասպիրացիոն համակարգեր, ռետինե խողովակ, տարա	0,1	60
	0,25	30
	0,5	15
Նարկոզա-շնչառական ապարատներ և դրանց հարմարանքներ՝ ներառյալ ռետինե խողովակները	0,1	60
	0,25	30
	0,5	15

Նշում՝ *՝ Ապահովվում է գրամդրական և գրամբացասական մանրէների (բացառությամբ տուբերկուլզը), ներհիվանդանոցային և անաէրոբ մանրէների, պաթոգեն սնկերի, վիրուսների՝ (Կոկսակի, ECHO, պոլիոմիելիտ, էնտերալ, պարենտերալ հեպատիտների, գրիպի, հերպես վիրուսի, ադենովիրուսի և այլ վիրուսների) ոչնչացումը:

Աղյուսակ 15.

**Ախտահանիչ միջոցի լուծույթով ձեռքային եղանակով բժշկական նշանակության
իրերի (բացառությամբ էնդոսկոպները և դրանց գործիքները) ախտահանման
ռեժիմներ համակցված նախամանրէազերծման մշակման հետ**

Ախտահանման օբյեկտ	Ախտահանիչ միջոցի աշխատանքային լուծույթի խտություն, %	Աշխատանքային լուծույթի ջերմաստիճան, °C	Ախտահանման պահաժամ, րոպե
Թրջում* բժշկական իրերի ամբողջական ընկղմում աշխատանքային լուծույթում՝ լցնելով խոռոչները և խողովակները	0,1 0,25 0,5	Առնվազն +18	60 30 15
Յուրաքանչյուր արտադրատեսակի լվացում նույն լուծույթում խոզանակի միջոցով (ռետինե իրերը մշակում են բամբակյա և թանգիվե կամ կտորից լաթով), իսկ խոռոչները՝ լցնում լուծույթով ներարկիչի միջոցով. -առանց փականային հատվածքների, խոռոչների և խողովակների բժշկական իրեր -փականային հատվածներով, խոռոչներով, խողովակներով բժշկական իրեր	Թրջման փուլում աշխատանքային լուծույթի խտությանը համապատասխան	Ոչ պակաս 18 Ոչ պակաս 18	0,5 1,0
Ողողում հոսող ջրով (խոռոչները և խողովակները	Չի նորմավորվում		3,0

լվանում են ներարկիչի միջոցով կամ էլեկտրաարտածծիչով)		
Ողողում թորած ջրով (խոռոչները և խողովակները լվանում են ներարկիչի միջոցով կամ էլեկտրաարտածծիչով)	Չի նորմավորվում	0,5

Նշում՝ *՝ Ապահովվում է գրամդրական և գրամբացասական մանրէների (բացառությամբ տուբերկուլոզը), ներհիվանդանոցային և անաէրոբ մանրէների, պաթոգեն սնկերի, վիրուսների՝ (Կոկսակի, ECHO, պոլիոմիելիտ, էնտերալ, պարենտերալ հեպատիտների, գրիպի, հերպես վիրուսի, ադենովիրուսի և այլ վիրուսների) ոչնչացումը:

**Ախտահանիչ միջոցի լուծույթով ձեռքային եղանակով էնդոսկոպների և դրանց
գործիքների ախտահանման ռեժիմներ համակցված նախամանրէազերծման
մշակման հետ**

Ախտահանման օբյեկտ	Ախտահանիչ միջոցի աշխատանքային լուծույթի խտություն, %	Ախտահանման պահաժամ, րոպե	Ախտահանման մեթոդ և միջոց
Թրջում* աշխատանքային լուծույթում	0,1 0,25 0,5	60 30 15	Արտադրատեսակի ամբողջական ընկղմում աշխատանքային լուծույթի մեջ
Յուրաքանչյուր արտադրատեսակի լվացում նույն լուծույթում, որտեղ իրականացվել է թրջումը - գործիքային խոռոչները - ներքին խոռոչները - բժշկական իրեր	Թրջման ընթացքի աշխատանքային լուծույթի խտությանը համապատասխան	3 3 2	Գործիքային խոռոչների մաքրում խոզանակով խոռոչների մաքրում ներարկիչով կամ էլեկտրաարտածիչով Յուրաքանչյուր արտադրատեսակի մաքրում խոզանակով, իսկ խոռոչները՝ ներարկիչով կամ էլեկտրաարտածիչով
Ողողում հոսող ջրով	-	3	խոռոչները և խողովակները լվանում են ներարկիչի միջոցով կամ էլեկտրաարտածիչով

Ողողում թորած ջրով	-	2	խոռոչները և խողովակները լվանում են ներարկիչի միջոցով կամ էլեկտրաարտածիչով
--------------------	---	---	---

Նշում՝ *՝ Ապահովվում է գրամդրական և գրամբացասական մանրէների (բացառությամբ տուբերկուլզը), ներհիվանդանոցային և անաէրոբ մանրէների, պաթոգեն սնկերի, վիրուսների՝ (Կոկսակի, ECHO, պոլիոմիելիտ, էնտերալ, պարենտերալ հեպատիտների, գրիպի, հերպես վիրուսի, ադենովիրուսի և այլ վիրուսների) ոչնչացումը:

Աղյուսակ 17.

Բժշկական նշանակության իրերի (բացառությամբ էնդոսկոպների և դրանց գործիքների) նախամանրէազերծման ռեժիմներ՝ ախտահանիչ միջոցի լուծույթով

Մշակման փուլ և միջոց	Պահաժամ՝ 0,25% աշխատանքային լուծույթի և ոչ պակաս 18 °C ջերմաստիճանի պահպանման պայմաններում
Թրջում՝ բժշկական նշանակության իրերի ամբողջական ընկղմումով աշխատանքային լուծույթում՝ լցնելով խոռոչները և խողովակները	15
Յուրաքանչյուր արտադրատեսակի լվացում նույն լուծույթում խոզանակի միջոցով (ռետինե իրերը մշակում են բամբակյա և թանգիվե կտորից լաթով), իսկ խոռոչները՝ լցնում լուծույթով ներարկիչի միջոցով. -առանց փականային հատվածքների, խոռոչների և խողովակների բժշկական իրեր -փականային հատվածներով, խոռոչներով, խողովակներով բժշկական իրեր	1 2
Ողողում հոսող ջրով (խոռոչները և խողովակները լվանում են ներարկիչի միջոցով կամ էլեկտրաարտածիչով)	3

Ողողում թորած ջրով (խոռոչները և խողովակները լվանում են ներարկիչի միջոցով կամ էլեկտրաարտածիչով)	0,5
--	-----

Աղյուսակ 18.

**Կոշտ և ճկուն էնդոսկոպների նախամանրէազերծման և եզրափակիչ մաքրման
ռեժիմներ՝ ախտահանիչ միջոցի լուծույթով**

Մշակման փուլ և միջոց	Պահաժամ՝ 0,05% աշխատանքային լուծույթի և ոչ պակաս 18 °C ջերմաստիճանի պահպանման պայմաններում
Թրջում՝ ամբողջական ընկղմումով աշխատանքային լուծույթում՝ լցնելով խոռոչները և խողովակները	15
Յուրաքանչյուր արտադրատեսակի լվացում նույն լուծույթում Ճկուն էնդոսկոպներ՝ -գործիքային խողովակը մաքրում են համապատասխան խոզանակով -ներքին խողովակները մաքրում են ներարկիչի կամ էլեկտրաարտածիչի միջոցով --արտաքին մակերեսները մաքրում են կտորե անձեռոցիկով	2,0 3,0 1,0
Կոշտ էնդոսկոպներ՝ -յուրաքանչյուր հատված լվանում են խոզանակի կամ կտորից անձեռոցիկի միջոցով -խոռոչները մաքրում են ներարկիչի միջոցով	2,0 2,0
Ողողում հոսող ջրով (խոռոչները և խողովակները լվանում են ներարկիչի միջոցով կամ էլեկտրաարտածիչով)	3,0
Ողողում թորած ջրով	2,0

(խոռոչները և խողովակները լվանում են ներարկիչի միջոցով կամ էլեկտրաարտածծիչով)	
--	--

Աղյուսակ 19.

Ախտահանիչ միջոցի լուծույթով բժշկական նշանակության իրերի՝ այդ թվում պտտվող (բացառությամբ էնդոսկոպների և դրանց գործիքների) ախտահանման ռեժիմներ մեխանիկական եղանակով ուլտրաձայնային սարքավորումներում

Մշակման փուլ	Աշխատանքային լուծույթի խտություն, %	Լուծույթի ջերմաստիճան, °C.	Ախտահանման պահաժամ, րոպե
Ուլտրաձայնային մշակում՝ -ախտահանում նախամանրէազերծման մշակման հետ համատեղ* - նախամանրէազերծման մշակում	0,1 0,1	 Ոչ պակաս 18°C	60 15
Ողողում հոսող ջրով	Չի նորմավորվում		3,0
Ողողում թորած ջրով	Չի նորմավորվում		0,5

Նշում՝ *՝ Ապահովվում է գրամդրական և գրամբացասական մանրէների (բացառությամբ տուբերկուլոզը), ներհիվանդանոցային և անաէրոբ մանրէների, ախտածին սնկերի, վիրուսների՝ (Կոկսակի, ECHO, պոլիոմիելիտ, ընդերային, արտաընդերային հեպատիտների, գրիպի, հերպես վիրուսի, ադենովիրուսի և այլ վիրուսների) ոչնչացումը:

**Ախտահանիչ միջոցի լուծույթով էնդոսկոպների և դրանց գործիքների
ախտահանման և նախամանրէազերծման մշակման ռեժիմներ մեխանիկական
եղանակով ավտոմատ սարքավորումներում՝ այդ թվում ուլտրաձայնային
սարքավորումների կիրառմամբ**

Մշակման փուլ	Աշխատանքային լուծույթի խտություն, %	Լուծույթի ջերմաստիճան, °C.	Ախտահանման պահաժամ, րոպե
Ուլտրաձայնային մշակում		Ոչ պակաս 18°C	
-ախտահանում համակցված նախամանրէազերծման մշակման հետ	0,1		60
-նախամանրէազերծման մշակում	0,05		10
Ողողում հոսող ջրով	Չի նորմավորվում		3,0
Ողողում թորած ջրով	Չի նորմավորվում		0,5

Նշում՝ *՝ Ապահովվում է գրամդրական և գրամբացասական մանրէների (բացառությամբ տուբերկուլոզը), ներհիվանդանոցային և անաէրոբ մանրէների, պաթոգեն սնկերի, վիրուսների՝ (Կոկսակի, ECHO, պոլիոմիելիտ, էնտերալ, պարենտերալ հեպատիտների, գրիպի, հերպես վիրուսի, ադենովիրուսի և այլ վիրուսների) ոչնչացումը:

**5. ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՈՒՄ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԻ, ԱՌՈՂՋԱՐԱՆԱՅԻՆ,
ՍՊՈՐՏԱՅԻՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ**

57. Ախտահանումը իրականացնում են ոռոգման, շփման, ընկղման և թրջելու եղանակներով՝ համաձայն սույն հրահանգի աղյուսակներ 3-6-ի ախտահանման ռեժիմների: Շփման եղանակով ախտահանումը կարելի է իրականացնել մարդկանց ներկայությամբ, առանց անհատական պաշտպանիչ միջոցների կիրառման (բացառությամբ ոռոգման եղանակով ախտահանման դեպքերից):

58. Ընկղման եղանակով ախտահանման ժամանակ աշխատանքային լուծույթը օգտագործվում է բազմակի (պիտանելիության ժամկետի պահպանման պայմաններում 41 օր), մինչև վերջինիս տեսանելի փոփոխությունները (գույնի փոփոխություն, նստվածքի առաջացում, պղտորում): Արտաքին փոփոխությունների դեպքում ախտահանիչ միջոցի աշխատանքային լուծույթը անմիջապես փոխարինվում է նորով:

59. Սպասարկման ոլորտի, սոցիալական ծառայություն իրականացնող, առողջարանային, սննդամթերքի արտադրության, հանրային սննդի և սննդի առևտուր իրականացնող կազմակերպություններում, վարսավիրանոցներում, կոսմետիկ միջամտություններ իրականացնող կազմակերպություններում ախտահանումը իրականացվում է՝ համաձայն սույն հրահանգի աղյուսակ 3-ի ախտահանման ռեժիմների:

60. Լողավազաններում, բաղնիքներում ախտահանումն իրականացվում է՝ համաձայն սույն հրահանգի աղյուսակ 5-ի ախտահանման ռեժիմների:

61. Մակաբուծային հիվանդությունների դեպքում օբյեկտների ախտահանումն իրականացվում է՝ համաձայն սույն հրահանգի աղյուսակ 7-ի ախտահանման ռեժիմների, իսկ բորբոսասնկերի դեմ պայքարի ժամանակ՝ համաձայն աղյուսակ 8-ի ախտահանման ռեժիմների:

62. Սենքերի մակերեսները (հատակ, պատ և այլն), կահավորանքի առարկաները, ապարատների, սարքերի և սարքավորումների մակերեսները շփում են միջոցի լուծույթով թրջված լաթով՝ 100 մլ/մ³ մակերեսի ծախսի նորմայի դեպքում:

63. Ախտահանումից հետո մակերեսների վրայից միջոցի աշխատանքային լուծույթի լվացում չի պահանջվում:

64. Օբյեկտների մշակումը ոռոգման եղանակով իրականացնում են հատուկ սարքավորումներով (ավտոմաքս և այլ ապարատներ), հասնելով հավասարաչափ և առատ թրջման: Միջոցի ծախսի նորման ոռոգման ժամանակ 300 մլ/մ² (հիդրոպուլտ, ավտոմաքս) կամ 150 մլ/մ² («Կվազար» տեսակի հեղուկացիր): Ոռոգման եղանակով կիրառումից հետո ախտահանիչ լուծույթի ավելցուկը հեռացնում են չոր լաթով: Ախտահանումը իրականացվում է՝ համաձայն սույն հրահանգի աղյուսակներ 3-ից 5-ի, 7-ի, 8-ի ախտահանման ռեժիմների:

65. Կոսմետիկ միջամտությունների ժամանակ կիրառվող էլեկտրոդների ախտահանումն իրականացվում է համաձայն սույն հրահանգի աղյուսակ 4-ի, իսկ կոսմետիկ միջամտությունների ժամանակ կիրառվող այլ իրերը՝ աղյուսակ 15-ի ախտահանման ռեժիմների:

66. Սանիտարա-տեխնիկական սարքավորումները ախտահանում են խոզանակի օգնությամբ, որից հետո լվանում են ջրով: Սանիտարա-տեխնիկական սարքավորումների ախտահանումն իրականացվում է համաձայն սույն հրահանգի աղյուսակներ 3-ից 5-ի, 7-ի ախտահանման ռեժիմների: Լուծույթի ծախսը կազմում է սրբելու եղանակով մաքրման դեպքում 100 մլ/մ^2 , իսկ ոռոգման եղանակով՝ 300 մլ/մ^2 (հիդրոպուլտի, ավտոմաքսի կիրառման դեպքում), 150 մլ/մ^2 (Կվազար տեսակի ցողացրիչի կիրառման դեպքում):

67. Սպասքի ախտահանումն իրականացվում է համաձայն սույն հրահանգի աղյուսակներ 3-ից 5-ի, 7-ի ախտահանման ռեժիմների: Սպասքը նախնական լվացումից հետո ընկղմում են միջոցի աշխատանքային լուծույթում, որից հետո լվանում հոսող ջրով:

68. Սպիտակեղենը թրջում են լուծույթի մեջ՝ ելնելով $4 \text{ և } 1 \text{ կգ}$ չոր սպիտակեղենի համար հաշվարկից՝ համաձայն սույն հրահանգի աղյուսակ 3-5-ի ախտահանման ռեժիմների:

69. Անջրաթափանց ներքնակի, մահճակալի և ներքնակի մակերեսը սրբում են միջոցով թրջված անձեռոցիկով 1 մ^2 100 մլ միջոցի հաշվարկով, այնուհետև սրբում ջրով: Ախտահանման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակներ 3-5-ում և 7-ում:

70. Ծածկոցների, բարձերի, լոգարանների ախտահանումը իրականացվում է սույն հրամանի աղյուսակ 5-ի ախտահանման ռեժիմների:

71. Կենցաղային և գրասենյակային սարքերի և տեխնիկայի, բաղադրիչների համակարգիչներ (ստեղնաշար, խոսափող, էկրան, տպիչ և այլն), հեռախոսների, հեռապատճենի, պատճենահանող և այլ սարքերի, գրասենյակային սարքավորումների ախտահանումը իրականացվում է սույն հրամանի աղյուսակ 3-ում ներկայացված ախտահանման ռեժիմների:

72. Թղթադրամների և մետաղադրամների հաշվիչների, արտարժույթի դետեկտորների և ակցիզային դրոշմանիշերի լվացումը և ախտահանումը, փաստաթղթերի, արխիվային պահարանների և դարակաշարերի մանրեցուցիչներն իրականացվում է սրբելու եղանակով՝ համաձայն սույն հրամանի աղյուսակ 3-ում ներկայացված ռեժիմների:

73. Կոշիկի ներքին մակերեսը երկակի շփում են ախտահանիչ լուծույթով առատորեն թրջված վիրախծոծով: Պահաժամի ավարտից հետո մշակված մակերեսը ջրով լվանում և չորացնում են: Ախտահանումը իրականացվում է համաձայն սույն հրամանի աղյուսակ 5-ի ախտահանման ռեժիմների:

74. Օդորակման, օդափոխիչ համակարգերի ախտահանումը իրականացվում է ինժինների ղեկավարությամբ՝ ոռոգման եղանակով:

75. Հողի ախտահանումը մակաբույծների ձվիկներից իրականացվում է ախտահանիչ միջոցի 5% լուծույթով 4 և նորմի հաշվարկով 1 մ², 12 ժամ պահաժամի պահման պայմաններում:

76. Ինքնավար և կենսազուգարանների պարունակության ախտահանումն իրականացվում է ախտահանիչ միջոցի 0,1% լուծույթով 60 րոպե պահաժամի պահման պայմաններում:

6. ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՈՒՄ ԱՐՅԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ԱԽՏԱՀԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ

77. Հեղուկ թափոնները, ողողվող ջուր (ներառյալ էնդոսկոպների ողողման ջուրը), արյուն, պացիենտի արտաթորանքները (խորխ, արյուն, կղանք, մեզ, փոխման զանգված և այլն), կենսաբանական հեղուկները, էքսուդատ և այլ ախտաբանական հեղուկները ախտահանում են աշխատանքային լուծույթը խառնելով կենսաբանակն նյութի հետ 2:1 հարաբերակցությամբ՝ համաձայն սույն հրամանի աղյուսակ 21-ի ախտահանման ռեժիմների:

78. Ախտահանիչ միջոցի աշխատանքային լուծույթը լցնում են ախտահանման ենթակա նյութով տարայի մեջ և խառնում: Ախտահանման ընթացքում տարան հերմետիկ փակվում է: Ողջ ընթացքում բուժաշխատողները կրում են ձեռնոցներ՝

պահպանելով հակահամաճարակային միջոցառումները: Ախտահանման պահաժամը ավարտվելուց հետո ախտահանված նյութերը ոչնչացվում են, որպես բժշկական թափոն՝ համաձայն Առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի թիվ 03-Ն հրամանի պահանջների:

79. Անհրաժեշտության դեպքում կենսաբանական հեղուկների ախտահանումը կարելի է իրականացնել հենց մակերեսի վրա՝ խառնելով միջոցի աշխատանքային լուծույթը և պահպանելով սույն հրամանի աղյուսակ 21-ում ներկայացված ախտահանման ռեժիմները: Այս մեթոդը իրականացնում են միայն այն դեպքում, երբ հնարավոր է կանխել կենսաբանական թափվածքի տարածումը:

Աղյուսակ 21.

**Ախտահանիչ միջոցի լուծույթներով արյան, կենսաբանական հեղուկների
ախտահանման ռեժիմներ***

Ախտահանման օբյեկտ	Աշխատանքային լուծույթի խտություն, %	Ախտահանման ժամանակ, րոպե	Ախտահանման եղանակ
Կենսաբանական նյութ՝ արյուն և դրա բաղադրիչներ, մեզ, կղանք, կղանքա- միզային խարնուրդ, կենսաբանական թափոն, փսխման զանգված, խորխ, թարախային արտազատուկ, ասպիրացիոն հեղուկ և այլն	0,5	60	Աշխատանքային լուծույթը խառնում են կենսաբանակն նյութի հետ 2:1 հարաբերակցությամբ
	1,0	30	
	2,0	15	
	1,0	60	Աշխատանքային լուծույթը խառնում են կենսաբանակն նյութի հետ 1:1 հարաբերակցությամբ
	2,0	30	
	4,0	15	

Նշում՝ *՝ Ապահովվում է գրամդրական և գրամբացասական մանրէների (բացառությամբ տուբերկուլոզը), ներհիվանդանոցային և անաէրոբ մանրէների, պաթոգեն սնկերի, վիրուսների՝ (Կոկսակի, ECHO,

պոլիոմիելիտ, էնտերալ, պարենտերալ հեպատիտների, գրիպի, հերպես վիրուսի, ադենովիրուսի և այլ վիրուսների) ոչնչացումը:

7. ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

80. Ախտահանիչ միջոցի հետ բոլոր աշխատանքները իրականացվում են ռետինե ձեռնոցներով և ակնոցներով:

81. Խուսափել աչքերի մեջ և մաշկի վրա միջոցի ընկնելուց:

82. Աշխատանքային լուծույթներով մակերեսների մշակումը իրականացնում են առանց շնչառական համակարգի պաշտպանիչ միջոցների, կարելի է նաև մարդկանց ներկայությամբ:

83. Ոռոգման ճանապարհով մակերեսների մշակման ժամանակ անձնակազմը պետք է օգտագործի անհատական պաշտպանության միջոցներ՝ ձեռքերի համար ռետինե ձեռնոցներ, շնչական օրգանների՝ ունիվերսալ շնչադիմակներ ՌՊԳ – 67 կամ ՌՈւ – 60 Մ «Բ» մակնիշի պատրոնով և աչքերի հերմետիկ ակնոց:

84. Օդափոխման և օդորակման համակարգերի ախտահանումն իրականացվում է դրանց ամբողջությամբ անջատման պայմաններում՝ օդափոխության ինժեներների մասնակցությամբ և ղեկավարությամբ:

85. Միջոցի տարաները հերմետիկ փակվում են:

86. Աշխատանքային լուծույթով մշակելուց հետո սպասքը պետք է ողողել հոսող ջրով՝ սպունգով 3 րոպեից ոչ պակաս:

87. Ախտահանիչ միջոցի հետ աշխատելիս անհրաժեշտ է պահպանել անհատական հիգիենայի կանոնները, ախտահանման գործընթացի ընթացքում չի թույլատրվում ծխել և սնունդ օգտագործել: Ախտահանման աշխատանքներից հետո անհրաժեշտ է լվանալ ձեռքերը և երեսը օճառով:

8. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

88. Ախտահանիչ միջոցը քիչ թունավոր է, սակայն դրա հետ աշխատելիս նախազգուշական միջոցառումները չպահպանելու դեպքում այն կարող է առաջացնել

շնչառական օրգանների գրգռվածություն (կոկորդի չորություն, հազ), աչքերի և մաշկի գրգռվածություն:

89. Աչքերի մեջ միջոցի ընկնելու դեպքում հարկավոր է դրանք անմիջապես լվանալ ջրի շիթի տակ 10-15 րոպեի ընթացքում և կաթացնել նատրիումի սուլֆացիլինի 30% լուծույթ: Անհրաժեշտության դեպքում դիմել ակնաբույժի:

90. Մաշկի վրա միջոցի ընկնելու ժամանակ անհրաժեշտ է լվանալ ջրով:

91. Ստամոքսի մեջ միջոցի ընկնելու դեպքում հարկավոր է խմել 10-20 ակտիվացրած ածուխի մանրացրած հաբերով մի քանի բաժակ ջուր: Փսխում չառաջացնել: Անհրաժեշտության դեպքում դիմում են բժշկի:

92. Շնչական ուղիների գրգռվածության դեպքում (քերում կոկորդում, քթում, հազ, դժվարացած շնչառություն, հևոց, արցունքահոսություն) տուժածին հեռացնում են աշխատանքային սենքից մաքուր օդ կամ լավ օդափոխվող սենք: Բերանը և քիթը մպանը ողողում են ջրով, այնուհետև նշանակում ներշնչում (ինհալացիա) 2% նատրիում հիդրոկարբոնատի լուծույթով, քթի շնչառության խանգարման դեպքում խորհուրդ է տրվում օգտագործել 2% լուծույթ: Տալիս են տաք ըմպելիք (կաթ կամ ջուր): Անհրաժեշտության դեպքում դիմում են բժշկի:

9. ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՓՈԽԱԴՐՄԱՆ ԵՎ ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

93. Միջոցը կարելի է փոխադրել տրանսպորտի ցանկացած տեսակով՝ բեռների փոխադրման կանոններին համապատասխան, որոնք գործում են տրանսպորտի յուրաքանչյուր տեսակի համար և երաշխավորում են միջոցի և տարայի ապահովությունը:

94. Միջոցը պահել չոր սառը, լավ օդափոխվող սենքերում փակ տարաներում ջերմության աղբյուրներից հեռու, խուսափելով արևի ուղիղ ճառագայթների տակ պահելուց, -30°C -ից 35°C -ի պայմաններում, դեղորայքից, սննդամթերքից առանձին, երեխաներին անհասանելի տեղերում:

10. ՈՐԱԿԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՖԻԶԻԿԱՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԱՆԱԼԻՏԻԿ ՄԵԹՈԴՆԵՐ

95. Ախտահանիչ միջոցի վերահսկվող ցուցանիշները և նորմերը ներկայացված են սույն հրամանի աղյուսակ 22-ում:

Աղյուսակ 22.

Ախտահանիչ միջոցի վերահսկման ցուցանիշներ և նորմեր

Ցուցանիշների անվանում	Նորմ
Արտաքին տեսքը, գույնը, հոտը	Բաց կապույտից մինչև մանուշակագույն թափանցիկ հեղուկ, թույլատրվում է նստվածքի առկայություն
Միջոցի խտությունը 20° C, գ/սմ ³	0,997 ± 0,005
Ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշ (pH)	10,5 ± 1,5
Դիդեցիլդիեթիլամոնիում քլորիդի զանգվածային բաժին, %	7,5±0,5
Ն,Ն-բիս (3 ամինապրոպիլ) դոդեցիլամինի զանգվածային բաժին	5,0±0,5
Պոլիհեքսամեթիլենբիգուանիդ հիդրոքլորիդի զանգվածային բաժին, %	2,5 ± 0,5

96. Արտաքին տեսքի, գույնի և հոտի որոշում. Միջոցի արտաքին տեսքը և գույնը որոշվում է տեսանելի կերպով: Դրա համար 30-32 մմ ներքին տրամագծով ապակե փորձանոթի մեջ լցնում են միջոցը մինչև կեսը և դիտում են արտացոլվող կամ անցնող լույսի տակ:

97. Խտության որոշում 20° C ջերմաստիճանի պայմաններում. 20° C-ում խտությունը որոշում են համաձայն «Քիմիական հեղուկ արտադրանքներ: Խտությունը սահմանելու մեթոդներ» ԳՈՍՏ 18995.1 -73 –ի:

98. Ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշի (pH) սահմանում. Միջոցի ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշը (pH) չափում են պոտենցիոմետրորեն՝ «Կենցաղային քիմիայի ապրանքներ: Ջրածնային իոնների ակտիվությունը սահմանելու մեթոդ» ԳՈՍՏ 50550-93 –ին համապատասխան:

99. Ն,Ն-բիս (3ամինապրոպիլ) դոդեցիլամինի զանգվածային բաժնի որոշման սարքեր, ռեակտիվներ, լուծույթներ.

1) Ընդհանուր նշանակության լաբորատոր կշեռքներ բարձր (2) կարգի ճշգրտությամբ՝ կշռման 200 գ առավելագույն սահմանով,

2) Բաժակ Բ-1-120 կամ Բ-2-150՝ ըստ ԳՈՍՏ 25336-82-ի,

3) Բյուրեղ 1-2-25-0,1՝ ըստ ԳՈՍՏ 20292-74,

4) Կոլբ Կն 1-100՝ ըստ ԳՈՍՏ 25336-82-ի,

5) Աղաթթվի 0,1 Ն ջրային լուծույթ՝ պատրաստված ըստ ՏՈւ 6-09-25-40-87-ի,

6) Մեթիլեն կարմիր ինդիկատոր՝ ըստ ՏՈւ 6-09-51-69-84-ի՝ 95 % էթիլեն սպիրտում,

7) Թորած ջուր՝ ըստ ԳՈՍՏ 6709-72-ի:

100. Հետազոտության իրականացում.

1) Պատրաստում են 99.9 % էթիլեն սպիրտում մեթիլեն կարմիր (0,1%) լուծույթ,

2) 2 գ ախտահանիչ միջոցը կշռում են էրլենմայերի 100 սմ³ տարողությամբ կոլբում 0,0002 գ ճշգրտությամբ, ավելացնում են 25 սմ³ թորած ջուր, 3-5 կաթիլ ինդիկատորի լուծույթ և տիտրում են աղաթթվի 0,1 մոլ/դմ³ լուծույթով: Տիտրումը իրականացնում են 1սմ³ չափաբաժիններով, իսկ էկվիվալենտի կետում 0,1 սմ³ մինչև դեղին գույնը կարմիրին հասցնելը:

101. Արդյունքների մշակում.

Ն,Ն-բիս (3ամինապրոպիլ) դոդեցիլամինի զանգվածային բաժինը (X), հաշվարկում են հետևյալ բանաձևով՝

$$X = \frac{299,54 \times V}{3 \times 100 \times m}$$

Որտեղ,

299,54/3 - Ն,Ն-բիս (3ամինապրոպիլ) դոդեցիլամինի գ-էքվիվալենտն է, գ,

V-աղաթթվի 0,1 ն ծավալն է, սմ³, նմուշի տիտրման համար,

M - միջոցի նմուշի ծավալ, գ:

102. Արդյունքը հաշվում են երկու զուգահեռ արդյունքների թվաբանական միջին սահմանումներ, որոնց միջև անհամապատասխանությունը չի գերազանցում թույլատրելի անհամապատասխանության արժեքը, հավասար է 0.2% -ի: Որոշման արդյունքի թույլատրելի հարաբերական ընդհանուր սխալը $\pm 4\%$ է, վստահության մակարդակ $P = 0.95$:

103. Ցետիլպիրիդինիումի քլորիդի 0,005 ն ջրային լուծույթի պատրաստման համար 0,179 ռեակտիվը լուծում են 100 սմ³ թորած ջրի հետ 100 սմ³ չափիչ կոլբում՝ հասցնելով ջրի ծավալը մինչև նիշը: Որպես հետազոտության արդյունք ընդունում են երկու մեծությունների միջին թվաբանականը, որոնց միջև բացարձակ տարբերությունը չպետք է գերազանցի թույլատրելի տարբերությանը՝ հավասար 0,2%-ի: Հետազոտության արդյունքի թույլատրելի հարաբերական գումարային շեղումը $\pm 4\%$ է $P=0,95$ վստահելիության հավանականության ժամանակ:

104. Դիդեցիլդիմեթիլամոնիում քլորիդի զանգվածային բաժնի որոշման սարքեր, սարքավորումներ, ռեակտիվներ.

1) Ընդհանուր նշանակության լաբորատոր կշեռքներ բարձր (2) կարգի ճշգրտությամբ՝ կշռման 200 գ առավելագույն սահմանով,

2) Չափիչ կոլբ 2-100-2՝ ըստ ԳՈՍ 1770-74-ի,

3) Կոլբ Կն 1-100՝ ըստ ԳՈՍ 25336-82-ի,

4) Պիպետ 4 (5)-1-1, 2-1-5՝ ըստ ԳՈՍ 20292-74-ի,

5) Կոն 1-25,1-50,1-100՝ ըստ ԳՈՍ 1770-74-ի

- 6) Նատրիում դոդեցիլսուլֆատ՝ ըստ ՏՈՒ 6-09-29-76,
- 7) Ցետիլպերիդին քլորիդի 1% ջրային լուծույթ 99,0% հիմնական նյութի պարունակությամբ (Գերմանական Մերկ արտադրության կամ դրան համարժեք),
- 8) Մեթիլեն կապույտ էոզին ինդիկատոր (ըստ Մայ Գրյունվալդի),
- 9) Կալիում քլոր՝ ըստ ԳՈՍՏ 4234-77-ի,
- 10) Քլորոֆորմ՝ ըստ ԳՈՍՏ 20015-88-ի,
- 11) Նատրիում սուլֆատ՝ ըստ ԳՈՍՏ 4166-76-ի,
- 12) Նատրիում կարբոնատ՝ ըստ ԳՈՍՏ 83-79-ի
- 13) Թորած ջուր՝ ըստ ԳՈՍՏ 6709-72-ի:

105. Հետազոտության նախապատրաստում. Նատրիում դոդեցիլսուլֆատի 0,005 ն ջրային լուծույթի պատրաստման համար լուծում են 0,150 գ նատրիում դոդեցիլսուլֆատը 100 սմ³ չափիչ կոլբում թորած ջրի հետ՝ ծավալը հասցնելով մինչև նիշը:

106. Ցետիլպիրիդինիումի քլորիդի 0,005 ն ջրային լուծույթի պատրաստման համար 0,179 ռեակտիվը լուծում են 100 սմ³ թորած ջրի հետ 100 սմ³ չափիչ կոլբում՝ հասցնելով ջրի ծավալը մինչև նիշը:

107. pH 11-ով կարբոնատա-սուլֆատային բուֆերային լուծույթ պատրաստում են՝ 100 գ նատրիումի սուլֆատը և 10 գ նատրիումի կարբոնատը 1 դմ³ ջրում լուծելով:

108. Չոր ինդիկատորային խառնուրդի պատրաստում. էոզին-մեթիլենային կապույտ ինդիկատորը խառնում են կալիումի քլորիդի հետ 1:100 հարաբերությամբ և մանրակրկիտ տրորում են հախճապակե հավանգի մեջ: Չոր ինդիկատորային խառնուրդը պահում են կափարիչով բյուքսի մեջ փակ վիճակում 1 տարի:

109. Նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթի շտկման գործակցի որոշում. Շտկման գործակիցը որոշում են ցետիլպիրիդինիումի քլորիդի լուծույթի երկփուլ տիտրումով 0,005ն նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթով: 50 սմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ լցնում են 10 սմ³ ցետիլպիրիդինիումի քլորիդի լուծույթ, լցնում են 10 սմ³ քլորոֆորմ,

ավելացնում են 30-50 մգ չոր ինդիկատորային խառնուրդ և լցնում 5 սմ³ բուֆերային լուծույթ: Կուլբան փակում են խցանով և թափահարում լուծույթը: Ցետիլպիրիդինիումի լուծույթը տիտրում են նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթով: Տիտրանտի հերթական չափաբաժնի ավելացումից հետո լուծույթը կուլբայի մեջ թափահարում են: Տիտրման վերջում քլորոֆորմի շերտի վարդագույն երանգը փոխվում է կապույտի: Հաշվում են նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթի շտկման գործակցի K մեծությունը՝

$$K = V_{\text{գա}} / V_{\text{ոց}},$$

Որտեղ՝ $V_{\text{գա}}$ - 0,005 ն լուծույթի ծավալն է (10 սմ³),

$V_{\text{ոց}}$ - տիտրում անցած նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթի ծավալն է, սմ³:

110. Հետազոտության իրականացում. Ախտահանիչ միջոցի հետազոտվող նյութի 2-ից մինչև 3,0 գ կշռվածքը, վերցված մինչև 0,0002 գ ճշտությամբ, քանակապես տեղափոխում են 100 սմ³ տարողությամբ չափիչ կուլբայի մեջ և ծավալը թորած ջրով հասցնում մինչև նիշը: Հղկված խցանով կոնաձև կուլբայի կամ գլանի մեջ լցնում են ստացված լուծույթի 10 սմ³, ավելացնում են 10 սմ³ քլորոֆորմ, ավելացնում 30-50 մգ չոր ինդիկատորային խառնուրդ և լցնում 5 սմ³ բուֆերային լուծույթ: Ստացված երկփուլ հանմակարգը տիտրում են նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթով: Տիտրանտի հերթական չափաբաժնի ավելացումից հետո լուծույթը կուլբայի մեջ թափահարում են: Տիտրման վերջում քլորոֆորմի շերտի վարդագույն երանգը վերածվում է կապույտի:

111. Արդյունքների մշակում. Ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի և ալկիլդիմեթիլթիլբենզիլամոնիումի քլորիդների զանգվածային բաժինը (գումարային) (X) տոկոսներով հաշվում են հետևյալ բանաձևով՝

$$X = \frac{0,0018 \times V \times K \times V_1 \times 100}{m \times V_2}$$

Որտեղ՝ 0,0018՝ դիդեցիլմեթիլամոնիում քլորիդի զանգվածն է (գումարային), որը համապատասխանում է ստույգ $C(C_{12}H_{25}SO_4Na)=0,005$ մոլ/դմ³ (0,005 ն), խտությամբ 1 սմ³ նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթին, գ,

V՝ տիտրում անցնող C ($C_{12}H_{25}SO_4Na$)= $0,005$ մոլ/դմ³ ($0,005_v$) խտությամբ նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթի ծավալն է, սմ³,

K՝ C ($C_{12}H_{25}SO_4Na$)= $0,005$ մոլ/դմ³ ($0,005_v$) խտությամբ նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթի շտկման գործակիցն է,

V₁՝ ծավալն է, որում լուծված է միջոցի կշռվածքը (100 սմ³),

V₂՝ հետազոտվող լուծույթի ալիկվոտային (ճշգրիտ կշռված) մասն է, որը վերցվել է տիտրման համար (10 սմ³),

m՝ հետազոտվող նմուշի զանգված, գ:

112. Որպես հետազոտության արդյունք ընդունում են երկու մեծությունների միջին թվաբանականը, որոնց միջև բացարձակ տարբերությունը չպետք է գերազանցի թույլատրելի տարբերությանը՝ հավասար $0,5\%$ -ի: Հետազոտության արդյունքի թույլատրելի հարաբերական գումարային շեղումը $\pm 3\%$ է $0,95$ վստահելիության հավանականության ժամանակ:

113. Ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդի զանգվածային բաժնի որոշման սարքավորումներ և ռեակտիվներ.

1) Ընդհանուր նշանակության լաբորատոր կշեռք՝ 200 գրամ առավել կշռման հնարավորությամբ,

2) Բյուրեղ $1-1-2-25-0.1$,

3) Չափիչ սրվակներ $2-100-2$,

4) Սրվակներ $KH-1-50$,

5) Կաթոցիկներ $4(5)-1-1$, $2-1-5$,

6) Գլաններ $1-25$, $1-50$, $1-100$,

7) Նատրիումի դոդեցիլսուլֆատ,

8) Ցետիլպիրիդինային քլորիդ 1-ջրային՝ հիմնական նյութի ոչ պակաս, քան՝ 99,0% պարունակությամբ «Մերկ» (Գերմանիա) ընկերության արտադրության կամ համապատասխան որակավորման ռեակտիվ,

9) էոզին-մեթիլենային կապույտ (ըստ Մայ-Գրյունվալդի),

10) Կալիումի քլորիդ,

11) Քլորոֆորմ,

12) Նատրիումի սուլֆատ,

13) Նատրիումի կարբոնատ,

14) Թորած ջուր:

114. Հետազոտության նախապատրաստում.

1) 0,005 ն նատրիումի դոդեցիլսուլֆատի ջրային լուծույթի պատրաստում. 100 սմ³ տարողությամբ չափիչ անոթի մեջ թորած ջրի մեջ լուծում են 0,150 գ նատրիումի դոդեցիլսուլֆատ, ջրի ծավալը հասցնելով մինչև նիշը:

2) Ցետիլպիրիդինիումի քլորիդի 0,005 ն ջրային լուծույթի պատրաստում. 100 սմ³ տարողությամբ չափիչ անոթի մեջ թորած ջրի մեջ լուծում են 0,179 գ ռեակտիվ 100 սմ³ ջրում, ջրի ծավալը հասցնելով մինչև նիշը:

3) Կարբոնատա-սուլֆատային բուֆերային լուծույթի պատրաստում. pH 11 կարբոնատա-սուլֆատային բուֆերային լուծույթը պատրաստում են 100գ նատրիումի սուլֆատը և 10 գ նատրիումի կարբոնատը լուծելով 1 դմ³ ջրի մեջ:

4) Չոր ինդիկատորային խառնուրդի պատրաստում. էոզին- մեթիլենային կապույտ ինդիկատորը խառնում են կալիումի քլորիդի հետ 1:100 հարաբերությամբ և մանրակրկիտ տրորում հախճապակե հավանգի մեջ: Չոր ինդիկատորային խառնուրդը պահում են խցանով բյուքսի մեջ 1 տարվա ընթացքում:

5) Նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթի ուղղման գործակցի որոշում. Ուղղման գործակիցը որոշում են 0,005_n նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթով ցետիլպիրիդինիումի քլորիդի լուծույթի երկփուլ տիտրումով: 50սմ³ տարողությամբ

չափիչ անոթի մեջ լցնում են 10 սմ^3 ցետիլաիրիդինիումի քլորիդ, լցնում են 10 սմ^3 քլորոֆորմ, ներմուծում են $10\text{-}30$ մգ չոր ինդիկատորային խառնուրդ և լցնում 5 սմ^3 բուֆերային լուծույթ: Անոթը փակում են խցանով և լուծույթը թափահարում: Ցետիլաիրիդինիումի լուծույթը տիտրում են նատրիումի դոդեցիլսուլֆատով: Տիտրանտի հերթական բաժնի ավելացումից հետո լուծույթը անոթի մեջ թափահարում են: Տիտրման վերջում քլորոֆորմի շերտի վարդագույն երանգը վերաժվում է կապույտի: Նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթի ուղղման գործակցի K մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$K = \frac{V_{\text{գա}}}{V_{\text{նս}}}$$

Որտեղ՝ $V_{\text{գա}}$ - ն՝ $0,005$ ն ցետիլաիրիդինիումի քլորիդի լուծույթի ծավալն է (10 սմ^3),

$V_{\text{նս}}$ - ն՝ տիտրում անցած նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթի ծավալն է, սմ³:

6) Հետազոտության իրականացում. 250 սմ^3 տարողությամբ կոնաձև անոթում վերցված մինչև չորրորդային տասնորդական նիշի ճշտությամբ $15,0$ գ-ից մինչև $20,0$ գ զանգվածով հետազոտվող միջոցին ավելացնում են 15 մլ թորած ջուր և խառնում են, մինչև այն լուծվի: Այնուհետև ավելացնում են 10 սմ^3 քլորոֆորմ, ներմուծում $10\text{-}30$ մգ չոր ինդիկատորային խառնուրդ և լցնում 5 սմ^3 բուֆերային լուծույթ: Ստացված երկփուլ համակարգը տիտրում են նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթով: Տիտրանտի հերթական բաժնի ավելացումից հետո լուծույթը անոթի մեջ թափահարում են: Տիտրման վերջում քլորոֆորմի շերտի վարդագույն երանգը վերաժվում է կապույտի:

7) Արդյունքների մշակում. Ալկիլդիամետիլբենզիլամոնիումի քլորիդի զանգվածային բաժինը (X) տոկոսներով հաշվում են հետևյալ բանաձևով.

$$X = \frac{0,00176 \times V \times K \times 100}{m}$$

Որտեղ՝ 0,00176 –ը ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդի զանգվածն է, որը համապատասխանում է 1 սմ³ նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթին՝ C (C₁₂ H₂₅ SO₄ Na)= 0,005 մոլ/դմ³ (0,005 Մ), գ/սմ³ ստույգ խտությամբ:

V – ն՝ նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթի ծավալն է C (C₁₂ H₂₅ SO₄ Na)= 0,005 մոլ/դմ³ (0,005 Մ), գ/սմ³ խտության, որն անցել է տիտրում, սմ³;

K – ն՝ C (C₁₂ H₂₅ SO₄ Na)= 0,005 մոլ/դմ³ (0,005 Մ) խտության նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթի ուղղման գործակիցն է;

m – ը՝ հետազոտվող նմուշի զանգվածն է, գ:

Որպես հետազոտության արդյունք ընդունում են երկու արդյունքների միջին թվաբանականը, որոնց միջև բացարձակ տարբերությունը չպետք է գերազանցի թույլատրելի տարբերությունը՝ հավասար 0,02%-ի: Հետազոտության արդյունքի թույլատրելի հարաբերական գումարային սխալը $\pm 3\%$ է 0,95 վստահելիության հավանականության ժամանակ:

115. Պոլիհեքսամեթիլենբիգուանիդ հիդրոքլորիդի զանգվածային բաժնի որշման սարքեր, սարքավորումներ, ռեակտիվներ.

1) Ընդհանուր նշանակության լաբորատոր կշեռքներ բարձր (2) կարգի ճշգրտությամբ՝ կշռման 200 գ առավելագույն սահմանով,

2) Չափիչ բաժակ ՍԲ-24/10՝ ըստ ԳՈՍՏ 25336-82-ի,

3) Բյուրեղ 1-1-2-25-0,1՝ ըստ ԳՈՍՏ 29251-91-ի,

4) Չափիչ կոն 2-250-2, 2-500-2, 2-1000-2՝ ըստ ԳՈՍՏ 1770-74-ի,

5) -25,1-50,1-100՝ ըստ ԳՈՍՏ 1770-74-ի

6) Քլորոֆորմ՝ ըստ ԳՈՍՏ 20015-88-ի,

7) Նատրիում դոդեցիլսուլֆատ՝ ըստ ՏՈՒ 6-09-29-76,

- 8) Ցետիլպերիդին քլորիդի 1% ջրային լուծույթ 99,0% հիմնական նյութի պարունակությամբ (Գերմանական Մերկ արտադրության կամ դրան համարժեք),
- 9) Դիմիդիում բրոմիդ,
- 10) Դիսուլֆին կապույտ ՎՆ 150,
- 11) Էթիլ սպիրտ՝ ըստ ԳՈՍՏ 51652-2000-ի,
- 12) Ծծմբաթթու՝ ըստ ԳՈՍՏ 14262-78-ի,
- 13) Թորած ջուր՝ ըստ ԳՈՍՏ 6709-72-ի:

116. Հետազոտության նախապատրաստում. 500 մգ դիմիդիում բրոմիդը կշռում են և լուծում 30սմ³ տաք 10% էթանոլում, այնուհետև նմանատիպ լուծում են 250 մգ դիսուլֆին կապույտը: Երկու լուծույթները տեղափոխում են 250 սմ³ ծավալով չափիչ կոլբի մեջ և 10% էթանոլի ջրային լուծույթով հասցնում ծավալը մինչև նիշը:

20 Թթվային ինդիկատորի լուծույթի պատրաստում. 20 սմ³ ինդիկատորի լուծույթը տեղափոխում են 500 սմ³ ծավալով չափիչ կոլբի մեջ, որտեղ նախորոք լցնում են 200 սմ³ թորած ջուր: 3 սմ³ ծծմբաթթու լցնելուց հետո ավելացնում են թորած ջուր: Լուծույթը պահում են մթության պայմաններում ոչ ավել 7 օր:

117. Հետազոտության կատարում. 250 սմ³ Կոնաձև կոլբի մեջ ավելացնում են 10 մլ հետազոտվող միջոց և 25 սմ³ քլորոֆորմ, 10 սմ³ թթվային ինդիկատոր: Խառնելուց հետո ստացվում է վերևի հատվածը բաց դեղին, ներքևինը՝ բաց կապույտ գույնի երկշերտանի լուծույթ: Այնուհետև իրականացնում են տիտրում 0,005 ն նատրիում դոդեցիլսուլֆատով և խառնում: Տիտրումը իրականացնում են մինչև քլորոֆորմի շերտի բաց մոխրակապտավուն գույն ստանալը:

118. Արդյունքների մշակում. Պոլիհեքսամեթիլենբիգուանիդ հիդրոքլորիդի զանգվածային բաժինը որոշում են հետևյալ բանաձևով՝

$$X = \frac{0,001099 \times (V_{\text{գուծ}} - V_{\text{ժամ}}) \times K \times V_1 \times 100}{V_{\text{գուծ}}}$$

$$m \times V_2$$

Որտեղ՝ 0,001099՝ պոլիհեքսամեթիլենբիգուանիդ հիդրոքլորիդի զանգվածն է (գումարային), որը համապատասխանում է ստույգ $C(C_{12}H_{25}SO_4Na)=0,005$ մոլ/դմ³ (0,005_ն), խտությամբ 1 սմ³ նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթին, գ,

$V_{գում}$ ՝ նատրիում դոդեցիլսուլֆատի զանգվածն է որը համապատասխանում է ստույգ $C(C_{12}H_{25}SO_4Na)=0,005$ մոլ/դմ³ (0,005_ն), խտությամբ 1 սմ³ նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթին, գ,

V' տիտրում անցնող $C(C_{12}H_{25}SO_4Na)=0,005$ մոլ/դմ³ (0,005_ն) խտությամբ նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթի ծավալն է, սմ³,

K' $C(C_{12}H_{25}SO_4Na)=0,005$ մոլ/դմ³ (0,005_ն) խտությամբ նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթի շտկման գործակիցն է,

V_1 ՝ ծավալն է, որում լուծված է միջոցի կշռվածքը (100 սմ³),

V_2 ՝ հետազոտվող լուծույթի ալիկվոտային (ճշգրիտ կշռված) մասն է, որը վերցվել է տիտրման համար (10 սմ³),

m ՝ հետազոտվող նմուշի զանգված, գ:

119. Որպես հետազոտության արդյունք ընդունում են երկու մեծությունների միջին թվաբանականը, որոնց միջև բացարձակ տարբերությունը չպետք է գերազանցի թույլատրելի տարբերությանը՝ հավասար 0,5%-ի: Հետազոտության արդյունքի թույլատրելի հարաբերական գումարային շեղումը $\pm 3\%$ է 0,95 վստահելիության հավանականության ժամանակ: